

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ
առևտրային կազմակերպության

**2012 թվականի գործունեության
հաշվետվություն**

Ռեկտոր՝ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գրքույկն ամփոփում է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի՝ բուհի 2012 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը՝ ներկայացված ինստիտուտի խորհրդի նիստում 2012 թվականի դեկտեմբերի 11-ին:

Հրատարակության պատրաստեց Անուշ Գևորգյանը

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Յուրաքանչյուր դարաշրջան գիտությանն ու կրթությանը ներկայացնում է իր պահանջները, որոնք առաջին հերթին նպատակ են հետապնդում ապահովելու հասարակական կյանքի առաջընթացը: Այս տեսակետից բացառություն չէ նաև ներկա դարաշրջանը, որի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է մեր երկրում դաստիարակել կիրթ և կայուն գիտելիքներով ու կոմպետենցիաներով զինված սերունդներ՝ շարունակաբար երաշխավորելով նրանց սահուն հերթափոխը:

Գիտության և կրթության կարևորման տեսանկյունից հայ ժողովուրդը բազմադարյան փորձ և ավանդույթներ ունի, որոնց մի մասը նա ձեռք է բերել աշխարհաքաղաքական զարգացումների տարբեր ժամանակահատվածներում տարբեր ժողովուրդների հետ շփման ճանապարհով, մյուս մասը իր իսկ՝ սեփական նվաճումներն են, որոնք նա կուտակել է՝ իր հոգեկերտվածքով պայմանավորված:

Աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում մեր օրերում ձևավորվել և զարգացման ակտիվ փուլ է թևակոխել եվրոպական կրթական տարածքը, որտեղ մուտք գործելու, քննություն բռնելու և անդամագրվելու, լիարժեքորեն ինտեգրվելու հեռանկարով վերջին երկու տասնամյակների ընթացքում մեր երկրում կատարվում է աննախադեպ հսկայածավալ աշխատանք, և դա պատահական չէ: Մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարը աներկբայորեն պայմանավորված է արդի ժամանակաշրջանի կրթական գործընթացի հնարավորինս անթերի կազմակերպմամբ: Բնական է, որ ասվածը վերաբերում է նաև բուհական կրթական համակարգին, որի կայացման և զարգացման ճանապարհին ծառացած գերակա խնդիրներից են կրթական գործընթացի մեջ շահակիրների համակողմանիորեն ներգրավվածության ապահովումը և նրանց պահանջների իսպառ բավարարումը, մի հանգամանք, որն այսօր առաջին հերթին ենթադրում է արմատական բարեփոխումներ նշված համակարգում՝ ներառյալ նաև այդ համակարգում աշխատողների բարոյահոգեբանական փոփոխությունները: Ինչ խոսք, արդեն իսկ արված և սպասվող բարեփոխումները գերազանցապես պետք է կատարվեն եվրոպական կրթական


չափանիշներին համապատասխան, քանի որ միայն այս ճանապարհով կարելի է հնարավորինս արագ և առանց ապարդյուն ջանքերի ինտեգրվել հիշյալ տարածքին: Այս պարագայում շատ կարևոր է ԵԲԿՏ-ին անդամագրված և առաջատար դիրքեր գրավող երկրների արդյունավետ փորձի ուսումնասիրությունը, այլև ներդրումը: Մյուս կողմից՝ նույնքան կարևոր է այդ բնագավառում հայրենական ձեռքբերումների վերաբերումը, որի արդյունքում առաջիկայում կարելի է կազմակերպել եվրոպական կրթական չափանիշներին համապատասխանող և ազգային հոգեկերտվածքն արտացոլող կրթական գործընթաց, որտեղ առանձին շեշտադրումներ կկրեն բուհի միջազգայնացմանը, ելքի արդյունքներին, շրջանավարտների կոմպետենտությանը, առհասարակ կրթության որակին վերաբերող և բազմաթիվ այլ հարցեր:

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Ինստիտուտ) 2012 թվականին ևս չի շեղվել իր նախանշած ուղուց, որը հստակորեն արտացոլված է Ինստիտուտի 2010-2015 թթ. հայեցակարգի դրույթներում, այն է՝ գրանցել համաչափ առաջընթաց բուհը ներկայացնող բոլոր բաղադրիչներում (ուսումնամեթոդական, գիտահետազոտական, ֆինանսատնտեսական, իրավական և այլն), որոնցից յուրաքանչյուրին անդրադարձ է կատարվում առաջիկա շարադրանքում:

ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հաշվետու տարում Ինստիտուտի գիտափորձարարական ընդունվել և ռեկտորի կողմից հաստատվել են թվով 39 կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, հայեցակարգեր:

Վերոնշյալ իրավական ակտերի գերակշռող մասը կարգավորում է կրթական գործընթացը և ստորաբաժանումների աշխատանքը: Որոշակի տեղ են գրավում սոցիալ-դաստիարակչական աշխատանքները կարգավորող նորմատիվային ակտերը:



Նկար 1. 2012 թ. Գիտական խորհրդում ընդունված նորմատիվային ակտերի տոկոսային հարաբերակցությունը:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կրեդիտային համակարգ. Ինստիտուտում ուսանողական գործընթացն ուսանողակենտրոն դարձնելու նպատակով շարունակվել են կրեդիտային համակարգի ընդլայնման, բարելավման աշխատանքները:

Դեռևս 2011 թ. մշակված և հաստատված 43 ուսումնական պլաններ (բակալավրի կրթական ծրագրեր) շրջանառության են դրվել 2012-2013 ուսումնական տարվա առաջին կուրսերում:

Առկա ուսուցման համակարգի 2008 թ. ներդրված և դեռևս գործող ուսումնական պլաններում որոշ դասընթացների հատկացված կրեդիտները տասնորդական մաս ունեին. այդ թերությունը վերացված է:

Հեռակա ուսուցման ուսումնական պլանները կազմվել են նոր սկզբունքով. հստակ տարանջատվել են ուսումնական և քննական նստաշրջանները, ինքնուրույն աշխատանքին հատկացված ժամանակաշրջանը:

2012-ին ներդրված որոշ ուսումնական պլաններ տրամադրվել են շահառուների, և ստացվել են փորձագիտական եզրակացություններ:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների համար (բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր) վերամշակվել են մասնագիտությունների տեղեկագրքերը: Պատրաստ են էլեկտրոնային տարբերակները:

Շարունակվում է կրթական ծրագրերի վերանայման գործընթացը:

Ուսումնական ստորաբաժանումներին տրամադրվել են առարկայական դասընթացների նկարագրերի նմուշները:

Ամբիոնների կողմից պատրաստվել են բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը:

Հաստատվել և ներդրվել է «Առարկայական նկարագրի մշակման ռազմավարություն» փաստաթուղթը:

Մշակվել են բոլոր մասնագիտությունների բնութագրիչները:

Գործընթացը շարունակական է, և դեռևս զգալի աշխատանք կա անելու կրեդիտային համակարգի ներդրման գործընթացը բարելավելու ուղղությամբ:

Կարևորվում է ուսանողների մասնակցությունը բուհի ակադեմիական և կառավարման գործընթացներին: Բուհի գործունեության կազմակերպման և գնահատման գործընթացում ուսումնառողների դերը մեծացնելու նպատակով ուսանողներն ընդգրկվել են տարբեր հանձնաժողովների կազմում: Հարցումների միջոցով ուսումնասիրվել է բուհի նյութատեխնիկական հագեցվածության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության և ուսանողներին դրանց հասանելիության վերաբերյալ սովորողների կարծիքը: Ուսխորհրդի ակտիվի մասնակցությամբ տեղի ունեցան բավականին երկարատև քննարկումներ դասաժամի տևողության փոփոխության վերաբերյալ, և, հաշվի առնելով բուհի ուսանողների հարցումների արդյունքները, կայացվեց որոշում դասաժամի տևողության փոփոխության վերաբերյալ: Ավանդական դարձած «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումը կատարվում է տարին երկու անգամ՝ քննաշրջանին հաջորդող մեկ ամսվա ընթացքում: Արդյունքները մշակվում են թե՛ դասախոսի, թե՛ ամբիոնի և թե՛ ֆակուլտետի վարկանշային գնահատման տեսանկյունից:

Կրթության որակի ապահովում: Հաշվետու ժամանակաշրջանում կրթության որակի ապահովման աշխատանքները հիմնականում ուղղված են եղել մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությանը: Աշխատանքները ծավալվել են հետևյալ ուղղություններով.

1. Իրազեկում
2. Վերապատրաստում
3. Խորհրդատվություն
4. Մշտադիտարկում
5. Աուդիտ

Որակի ապահովման համակարգի ռազմավարության իրազեկվածության ապահովման նպատակով կենտրոնի կողմից անցկացվել են **իրազեկման սեմինարներ**, որոնց մասնակցել են շուրջ 60 աշխատակիցներ (դասախոսներ, վարչական աշխատողներ, ուսանողներ):

Բուհի որակի ապահովման և աշխատանքների ռազմավարական պլանավորման վերաբերյալ կազմակերպվել են

վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են շուրջ 80 աշխատակիցներ (դասախոսներ, վարչական աշխատողներ) և ուսանողներ: Վերապատրաստման դասընթացների ընթացքում քննարկվել և մշակվել են որակի ապահովման քաղաքականությունն արտացոլող հետևյալ փաստաթղթերը.

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության որակի ապահովման հայեցակարգ,

2. Բուհի որակի ապահովման համակարգի ներդրման և կատարելագործման միջոցառումների պլանը /2011-2015 թթ./:

Հաշվետու ժամանակաշրջանում Բնստիտուտի ինքնավերլուծության գործընթացն իրականացնելու նպատակով կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է ֆակուլտետի ինքնավերլուծության ձևաչափը: Ֆակուլտետների ինքնավերլուծության զեկույցի պատրաստման ընթացքում կենտրոնի կողմից մատուցվել են խորհրդատվական ծառայություններ բուհի 5 ֆակուլտետների ղեկաններին, փոխղեկաններին, ստորաբաժանումների՝ որակի ապահովման հանձնաժողովների անդամներին (դասախոսներ, վարչական աշխատողներ, ուսանողներ): Ձեկույցների քննարկումից հետո տրվել է նախնական գնահատում, ինչից հետո բացթողումների շտկման նպատակով խորհրդատվություններ են կազմակերպվել ինքնավերլուծության զեկույցը պատրաստող խմբի անդամների համար: Հանդիպումներին քննարկվել են նաև բուհի որակի ապահովման հայեցակարգի, բուհի որակի ապահովման համակարգի ներդրման և կատարելագործման միջոցառումների պլանի /2011-2015 թթ./ մշակման, կրթության որակի ապահովման համակարգի ցուցանիշների և նրանց մշտադիտարկման կարգի սահմանման հետ կապված հարցերը, քանի որ այդ գործընթացը պետք է հիմնված լինի Բնստիտուտի մի կողմից՝ ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության և զարգացման հեռանկարի, մյուս կողմից՝ առաքելության վրա:

Բնստիտուտի ինքնավերլուծության գործընթացի համակարգման նպատակով ֆակուլտետներում ստեղծվել են կրթության որակի ապահովման հանձնաժողովներ: Ֆակուլտետային հանձնաժողովների հետ պարբերաբար

կազմակերպվում են հանդիպումներ՝ Ինստիտուտում որակի մշակույթի ձևավորման նպատակով:

Բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի իրավիճակի վերլուծության վերաբերյալ կրթության որակի ապահովման կենտրոնը Ինստիտուտի Գիտլորհրդի և ռեկտորատի նիստերում հանդես է եկել զեկուցումներով:

Կրթության որակի ապահովման կենտրոնը մասնակցել է հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած «Որակի ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության համակարգում» շահակիցների երկրորդ համաժողովին:

Հաշվետու ժամանակաշրջանում «Որակի ապահովման ներբուհական համակարգի ստեղծում և ամրապնդում» ծրագրի շրջանակներում ստեղծվել է նյութական և տեխնիկական ռեսուրսներով հագեցած Կրթության որակի ապահովման կաբինետ, որտեղ անցկացվում են կրթության որակի ապահովման վերաբերյալ խորհրդատվություններ, սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ և քննարկումներ, ինչպես նաև մասնագիտական պարապմունքներ ու միջոցառումներ:

2012 թ. Կենտրոնի կողմից ստեղծվել է նաև բանավեճի ակումբ, որի աշխատանքներին մասնակցում է շուրջ 50 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են **մշտադիտարկման աշխատանքներ.**

1. Մշտադիտարկվել է կաբինետների գործավարությունը, կատարվել է մշտադիտարկման արդյունքների վերլուծություն, կաբինետների պատասխանատուներին աշխատանքների շտկման նպատակով տրվել են համապատասխան ցուցումներ:

2. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին առաջին կուրսի ուսանողների շրջանում անցկացվել է հարցում, որի նպատակն էր ուսումնասիրել ուսանողների հոգեբանական հարմարվողականությունը բուհական կյանքին:

3. Կենտրոնի աշխատակիցների կողմից ամփոփվել են մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ուղղվածությունը որոշելու նպատակով անցկացված հարցման արդյունքները: Հարցումն իրականացվել է ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում:

4. Մշտադիտարկվել են «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարություն» և «Առարկայական նկարագրի մշակման ռազմավարություն» փաստաթղթերը, արվել են համապատասխան շտկումներ:

5. Շրջանավարտներին աշխատաշուկայում կողմնորոշելու և աշխատաշուկայի կարիքների մշտադիտարկման համակարգի ստեղծման նպատակով կազմվել է ուսանողների և շրջանավարտների աշխատանքի որոնման աջակցության միջոցառումների պլան:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է Բնաստիտուտի շուրջ 30 նորմատիվ փաստաթղթերի **առուղիտ**, արդյունքների հիման վրա արվել են առաջարկություններ:


Ուսանողների գնահատումը որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն տարրերից է: Թափանցիկության ապահովման և տարբեր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով կազմակերպվել է ուսանողների գիտելիքների ստուգում և գնահատում համակարգչային թեստավորմամբ: 5 համահինստիտուտային և 16 մասնագիտական առարկաներից թեստավորվել են 58 կուրսերի ուսանողներ:

Ընդունելություն: 2012 թ. Բնաստիտուտի առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրի դիմորդների թիվը եղել է 639, մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 136:

Բակալավրի կրթական ծրագրի դիմորդներից 635-ը դպրոցն ավարտել են 2012 թվականին. բոլորն էլ հանրակրթության շրջանավարտներ են: 639 դիմորդներից 493-ը (77,1%) իգական սեռի է:

Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգ է ընդունվել 426 ուսանող: Աշխարհագրությունն այսպիսին է.

- Լոռու մարզ՝ 405, որից՝ Վանաձոր 230,
- Արագածոտնի մարզ՝ 5,
- Տավուշի մարզ՝ 12,
- Արմավիրի մարզ՝ 1,
- Վրաստանի Հանրապետություն՝ 3:



Նկար 2. Բուհի բակալավրի կրթական ծրագրի առաջին կուրսի դիմորդների և ընդունված ուսանողների թվաքանակը:

Առկա ուսուցման համակարգ ընդունվածների 61,5%-ը (262 ուսանող) քաղաքաբնակ է: 426 ուսանողների 80,9%-ը (345) իգական սեռի է, 36,1%-ի 18 տարին ընդունվելու պահին լրացած չի եղել:

Քաղաքաբնակ սովորողների տեսակարար կշիռն ավելի մեծ է մագիստրոսի կրթական ծրագիր ընդունվածների մոտ՝ 87,3%: Ավելին, վերջիններիս 78,5%-ը վանաձորցիներ են: Ստահոգիչ է նաև սեռերի հարաբերակցության խնդիրը. մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների ընդամենը 7,1%-ն է արական սեռի:

Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգ է դիմել 367 դիմորդ, ընդունելության քննությունները հաղթահարել է 283-ը: Աշխարհագրությունը գրեթե նույնն է, միայն մեկ ուսանող Կոտայքի մարզից է:

Այստեղ ևս գերակշռողը Լոռու մարզի բնակիչներն են՝ 89,7%, քաղաքաբնակ է 54,4%-ը, իգական սեռի է 72,4%-ը:

2012թ. Ինստիտուտ են ընդունվել օտարերկրյա 8 քաղաքացի (բոլորն էլ՝ Վրաստանի Հանրապետությունից):



Նկար 3. Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվաքանակն ըստ օտարաձաշրջանի:

Այս տարվա բակալավրի կրթական ծրագրով ընդունելության անցումային միավորների շեմը նախորդ տարվա համեմատությամբ փոխվել է հետևյալ կերպ. առկա վճարովի ուսուցման համակարգի անցումային միավորների շեմերը նվազել են, իսկ նույն համակարգի անվճար և հեռակա ուսուցման համակարգի անցումային միավորների շեմերը՝ բարձրացել:

Աղյուսակ 1. Բակալավրի կրթական ծրագրի ընդունելության անցումային շեմը՝ ըստ մասնագիտությունների


h/h	Մասնագիտություն	Առկա ուսուցման համակարգ		Հեռակա ուսուցման համակարգ
		անվճար	վճարովի	վճարովի
1.	Կենսաբանություն	25,5	16,5	16,3
2.	Բնապահպանություն և բնօգտագործում		23,5	21,0
3.	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ		17,1	16,2
4.	Պատմություն	49,0	26,25	26,1
5.	Իրավագիտություն	52,75	28,5	27,3

	/մանկավարժություն/			
6.	Կառավարում	52,75	41,75	32,6
7.	Աշխարհագրություն	17,75	23,00	22,0
8.	Սոցիալ-մշակութային գործունեություն (կառավարում՝ մենեջմենթ)		25,00	16,0
9.	Հայոց լեզու և գրականություն	47,75	27,75	37,5
10.	Ռուսաց լեզու և գրականություն	33,5	15,75	16,0
11.	Անգլերեն լեզու և գրականություն		26,50	25,3
12.	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	24,75	16,75	16,5
13.	Մանկավարժություն և հոգեբանություն		40,25	26,3
14.	Սոցիալական մանկավարժություն	26,5	16,50	17,0
15.	Մաթեմատիկա	30,25	22,50	17,6
16.	Ինֆորմատիկա		18,00	19,3
17.	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	27,75	17,25	19,0
18.	Թարգմանչական գործ՝ անգլերեն, հայերեն	46,0	28,75	
19.	Լրագրություն	39,25	28,25	
20.	Կերպարվեստ և գծագրություն		16,0	
21.	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	30,5	18,5	
22.	Ֆիզիկա	29,5	18,75	
23.	Դեղագործական քիմիա	27,5	16,75	
24.	Քիմիա			21,0
25.	Մանկավարժություն և սոցիոլոգիա			16,3

Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ:

Առ 2012 թ. դեկտեմբերի 1-ը Ինստիտուտի ուսանողության համակազմի թվաքանակը եղել է 3312, որից 3020-ը՝ բակալավրի կրթական համակարգում, 292-ը՝ մագիստրոսի: Հարաբերակցությունը տոկոսներով դիտարկելիս պարզվում է, որ Ինստիտուտի ուսանողության համակազմում բակալավրի կրթական ծրագրերի սովորողների հաշվեկշիռը 91,2% է, մագիստրոսի կրթական ծրագրով սովորողներինը՝ 8,8 %:

Առկա ուսուցման համակարգում սովորում է 1300 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 1720 ուսանող, այդ թվում, համապատասխանաբար, 281-ը և 16-ը՝ անվճար համակարգում:




Նկար 4. Ուսանողական համակարգը՝ ըստ ուսուցման համակարգերի և կրթական ծրագրերի

Ինստիտուտում սովորում է 26 օտարերկրացի ուսանող:

Վերջին տարիներին առկա ուսուցման համակարգի նկատմամբ նկատվում է հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվաքանակի աճ: Այս հարցում, անշուշտ, դեր են խաղացել 2011 թ. սակավաթիվ ընդունելությունը, սցիալական պայմաններից ելնելով՝ կրթություն ստանալուն զուգահեռ աշխատելու հանգամանքը և այլն:

Եթե 2007 թ. հունվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման համակարգի ուսանողությունը կազմել է 47%, ապա այսօր այն հասել է 51,9 %-ի:




Նկար 5. Ուսանողական համակազմը՝ ըստ ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման

Պատճառները տարբեր են՝ սոցիալականից մինչև ժողովրդագրական:

2012 թ. Ինստիտուտը տվել է 1177 շրջանավարտ, որից 1074-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 103-ը՝ մագիստրոսի: Բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 118 ուսանող (11%), մագիստրատուրան՝ 54 (52,4%): Ինչ խոսք, այս դեպքում արտացոլվում է մուտքի և ելքի տրամաբանական կապը: 2008 թ. բակալավրի կրթական ծրագրի ընդունելության միջին շեմը եղել է 14,5-15 բալ, իսկ 2010 թ. մագիստրոսական կրթական ծրագրով ընդունելության շեմը՝ 17,8-18 միավոր:

Ուսանողական նպաստի տրամադրում: Ուսման վճարի լրիվ փոխհատուցման գործընթացը /փոխատեղում/ կազմակերպվել է ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման բազմագործոնային համակարգի կիրառմամբ:

Անվճար համակարգում սովորելու իրավունք են ստացել բակալավրի կրթական ծրագրով 2-4-րդ և մագիստրոսական կրթական ծրագրով 2-րդ կուրսերի թվով 249 ուսանողներ: Անվճար սովորելու իրավունքը պահպանել են բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի ուսանողների 72.2%-ը, 3-րդ կուրսերի ուսանողների 78.6%-ը և 4-րդ կուրսերի ուսանողների 85%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի ուսանողների 90%-ը:



Նկար 6. Անվճար սովորելու իրավունքը պահպանած ուսանողների տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ կուրսերի և կրթական համակարգերի

Ակնառու է բարձր կուրսեցիների ավելի լուրջ և սթափ վերաբերմունքը կրթության նկատմամբ: Բացի դրանից՝ Ինստիտուտում համակարգվել է ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվության կազմակերպման, էլեկտրոնային կրթական նյութերի տրամադրման գործընթացը: Փոխատեղման հետևանքով ձևավորված մրցակցային դաշտը նպաստում է կրթության որակի բարձրացմանը, մանավանդ այդ դաշտում ապահովվում է թափանցիկությունը:

Մրցութի արդյունքներով համակարգի փոփոխման են ենթարկվել 43 ուսանող /անվճար համակարգից վճարովի համակարգ/:

Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է օրենքով նախատեսված սոցիալական խմբերին՝ թվով 32 ուսանողների:


Աղյուսակ 1. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների թվաքանակը.

h/h	Կարգավիճակը	Ուսանողների թվաքանակը	
		առկա ուսուցման համակարգ	հեռակա ուսուցման համակարգ
1.	Զոհված զինծառայողի երեխա-ուսանող	3	4
2.	1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ-ուսանող	6	8
3.	Ծնողական խնամքից զրկված երեխա-ուսանող	7	4
Ընդամենը		16	16
		32	

Ինստիտուտի ֆինանսական միջոցների հաշվին առկա և հեռակա ուսուցման համակարգերի վճարովի չափաքանակի շրջանակներում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության հաշվառմամբ՝ մրցութային կարգով, հատկացվել է ուսման վճարի մասնակի փոխհատուցում: Սոցիալապես անապահով և ծնողագուրկ ուսանողների թիվը կազմել է 27.3%, իսկ գերազանց առաջադիմությամբ ուսանողների թիվը՝ 9.4%:

Կրթաթոշակ: 2012 թ. գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարք դրսևորելու համար կիսամյակի կտրվածքով կրթաթոշակ է տրվել շուրջ 280 ուսանողի, որի 46.8%-ը՝ գերազանցության: Կարելի է նշել, որ բարձրացել է

ուսանողների առաջադիմությունը՝ համաձայն կրթական ծրագրերից ակնկալվող ուսումնառության արդյունքների:



Նկար 7. Կրթաթոշակ ստացող ուսանողների թվաքանակը

Բացի պետական կրթաթոշակից՝ 22 ուսանողի հատկացվել են Ինստիտուտի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում սովորող ուսանողների համար սահմանված են տարբեր անվանական կրթաթոշակների անվանակարգեր¹:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունն ուսուցման գործընթացում: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունն ուսուցման գործընթացում հնարավորություն է տալիս բարձրացնել դասի պատրաստման և վարման արդյունավետությունը: Համակարգչային

¹ Բակալավրի կրթական ծրագիր՝ Հրանտ Մաթևոսյանի անվան, Ժորա Հախինյանի անվան, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորի, Արհմիության, Քաղաքապետարանի ավագանու կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ:

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ Խաչատուր Աբովյանի, պրոֆ. Վարազ Առաքելյանի, Մովսես Խորենացու, Լևոն Օրբելու, Սերգեյ Մերգելյանի անվան «Երիտասարդ հետազոտող» անվանական կրթաթոշակներ

տարբեր ծրագրերի կիրառությունը հնարավորություն է տալիս դասավանդվող նյութն ուղեկցել համապատասխան գծապատկերներով, գրաֆիկներով, սխեմաներով, տեսաֆիլմերով, ցուցադրումներով: Ուսուցման ժամանակակից միջոցներից է ինտերակտիվ գրատախտակը, որը հնարավորություն է ընձեռում վարել դասախոսություն և գործնական աշխատանքներ: Դասախոսների մի մասն ի վիճակի է դասի ժամանակ ինտերակտիվ գրատախտակի աշխատանքի ընթացքը ձայնագրելու և տրամադրելու ուսանողներին՝ դասապատրաստման ընթացքում կիրառելու նպատակով:

2012 թ. բուհում կազմակերպվել են «Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունն ուսուցման գործընթացում» թեմայով դասընթացներ, որոնցում ընդգրկվել են Ինստիտուտի տարբեր ամբիոնների 30 դասախոսներ:

Նամնատիպ միջոցառում անցկացվել է նաև Ինստիտուտի ուսումնաօժանդակ կազմի հետ. շուրջ 21 աշխատակիցների համար կազմակերպվել են խմբային պարապմունքներ՝ համակարգչային ընդհանուր գիտելիքների բարձրացման նպատակով:

Պրակտիկա: Ապագա մասնագետի կայացման գործում անվիճելի է պրակտիկայի դերը, որի ընթացքում ուսանողները գործնականում կիրառում են տարբեր գիտելիքներ, կարողություններ, ձեռք են բերում մասնագիտական հմտություններ, կոմպետենցիաներ: 2012 թ. Ինստիտուտում շուրջ 26 մասնագիտությունների գծով 1975 ուսանող անցկացրել է արտադրական պրակտիկա, որից բակալավրի կրթական ծրագրով՝ 1840, մագիստրոսի կրթական ծրագրով՝ 135 ուսանող: Արտադրական պրակտիկայի անցկացման նպատակով պայմանագրեր են կնքվել թվով 32 կազմակերպությունների հետ, որոնցից 20-ը դպրոցներ են, 12-ը՝ այլ հաստատություններ:

Ուսումնական պրակտիկան կազմակերպվել է 18 մասնագիտությունների գծով՝ 841 ուսանողների մասնակցությամբ:

Պրակտիկայի անցկացման նախապատրաստական և ամփոփման շրջաններում տեղ են գտել մի շարք բացասական երևույթներ (անտարբերություն, անպատասխանատվություն և այլն), որոնցով բնութագրվում են ոչ միայն Ինստիտուտի աշխատակիցները, այլև այն հաստատությունների, որտեղ

անցկացվում է պրակտիկան: Այս ոլորտում որակի ապահովման առումով շատ անելիքներ կան:

Ասպիրանտուրա: Ինստիտուտում երկու՝ գարնանային և աշնանային քննաշրջաններով շարունակում են կազմակերպվել թեկնածուական որակավորման քննությունների և ստուգարքի նախապատրաստական դասընթացները, ինչպես նաև համապատասխան քննություններն ու ստուգարքը: Ասպիրանտների թվի ավելացման և ասպիրանտական կրթության կայացման նպատակով 2012 թ. առաջին անգամ մագիստրատուրայի ուսանողների համար կազմակերպվել են ասպիրանտուրայի ընդունելության քննությունների ծրագրերին համապատասխան մասնագիտական խորհրդատվություններ և դասընթացներ օտար լեզվից և ինֆորմատիկայից: Այս քայլն արվել է որպես համարժեք արձագանք այն մտահոգության, որ 2012 թ. Ինստիտուտում ասպիրանտների և հայցորդների համալրում չի եղել:

Կրթական բարեփոխումներ: Հաշվետու ժամանակահատվածում կրթական բարեփոխումների և կապերի բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է տեղեկատվական աշխատանք՝ հանրապետությունում և նրա սահմաններից դուրս անցկացվող գիտաժողովների, սեմինարների, դրամաշնորհային տարբեր ծրագրերի մասին Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ուսանողությանը, աշխատակիցներին տեղեկացնելու նպատակով:

Այդ տեղեկատվության շնորհիվ մեր դասախոսները, ուսանողությունը մասնակցել են մի շարք գիտաժողովների՝ ներկայացնելով իրենց գիտական հոդվածները, որոնց մի մասը տպագրվել է համապատասխան ժողովածուներում:

Կրթական բարեփոխումների բնագավառի աշխատանքն ուղղված է Ինստիտուտի ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (կարգեր, կանոնակարգեր, ուղեցույցներ և այլն) մշակմանը:

Բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է աշխատանք՝ մագիստրատուրայի դիպլոմների հավելվածները Բոլոնյան գործընթացի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության հրահանգների: Ներկայումս Ինստիտուտի

ուսանողներին տրվում են դիպլոմի երկլեզու (հայերեն, անգլերեն) հավելվածներ, որոնք ձևակերպված են ըստ ներկայացվող պահանջների:

Ինստիտուտի հավատարմագրման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Մշակվել և Գիտխորհրդում ընդունվել է «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարությունը» փաստաթուղթը, որտեղ ներկայացված են մասնագիտության կրթական ծրագրերի մշակման նպատակը և խնդիրները, մշակման ռազմավարական գործողությունները, մասնագիտության կրթական ծրագրին ներկայացվող պահանջները, կառուցվածքն ու բովանդակությունը:
2. Գիտխորհրդի հաստատման է ներկայացվել «Առարկայական նկարագրի մշակման ռազմավարությունը», որտեղ ներկայացված են առարկայական նկարագրի բաղադրիչները և եվրոպական չափորոշիչներով սահմանված կոմպետենցիաները:
3. Եվրոպական չափորոշիչներին համապատասխանող կրթական ծրագրերի և առարկայական նկարագրերի մշակման ու ներդրման նպատակով պարբերաբար անցկացվել են անհատական և խմբային խորհրդատվություններ:
4. Կրթական ծրագրերի կազմման աշխատանքային խմբերում, ինչպես նաև առանձին ամբիոններում անցկացվել են սեմինարներ՝ Թյունինգ-մեթոդաբանությամբ կրթական ծրագրերի մշակման և ներդրման վերաբերյալ:
5. Ընդլայնվում և կատարելագործվում են կրթական ծրագրերի մշակման գործընթացում ուսանողներին և շրջանավարտներին ներգրավելու մեթոդները՝ ըստ «Ուսանողը և ժամանակակից կրթական ծրագիրը» ուղեցույցում ներկայացված հայեցակարգի:
6. Շարունակվում են աշխատանքները գործատուների հետ սոցիալական գործընկերության ակտիվացման ուղղությամբ՝ ըստ «Սոցիալական գործընկերությունը բուհերի և

աշխատաշուկայի միջև որպես նորարարական զարգացման միջոց» ձեռնարկում ներկայացված հայեցակարգի:

7. Մշակվել են սոցիոլոգիական հարցումների հարցաթերթիկներ՝ մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ուղղվածությունը որոշելու նպատակով: Այս հարցաթերթիկների միջոցով ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում իրականացվել է հարցում, ապա կատարվել հարցման արդյունքների վերլուծություն:

Կարիերայի կենտրոն: Մշտական աշխատանքային կապ է պահպանվում Վանաձորի զբաղվածության մարզային կենտրոնի հետ: Կենտրոնն իր մասնակցությունն է բերել մարզի գործատուների խորհրդի աշխատանքներին:

Ըստ կենտրոնի կողմից ներկայացված առաջարկի՝ քննարկվել է ծնողների փոխարեն գործատուների կողմից Ինստիտուտին մասնագետներ պատվիրելու և պայմանագրեր կնքելու հարցը:

Փետրվարին Ինստիտուտի աշխատակիցներից մասնակցել են «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության կողմից կազմակերպված «Նախագծերի կառավարում» գրքի շնորհանդեսին, որի ընթացքում դասընթացի մասնակիցներին հանձնվել են ավարտական հավաստագրեր, իսկ բոլոր ներկա բուհերի ներկայացուցիչներին՝ մեկական փաթեթ «Նախագծերի կառավարում» դասընթացն իրականացնելու համար:

Ինստիտուտի աշխատակիցներից մասնակցել են նաև «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության կողմից գործընկեր բուհերի դասախոսների համար կազմակերպված արդյունավետ ուսուցման մեթոդների վերաբերյալ եռօրյա դասընթացներին:

Ուսխորհրդին տրամադրվել է նաև «ՎիվաՄեյ-ՄՏՄ»-ում գործընկեր բուհերի ուսանողների համար 2012 թ.-ին նախատեսված պրակտիկայի տարեկան ժամանակացույցը: Ցանկություն հայտնած ուսանողների տվյալների փաթեթները կազմվել և ուղարկվել են «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերություն: Հարցազրույցի արդյունքում ամառային երկամսյա պրակտիկային մասնակցել է մեկ ուսանող:

Ինստիտուտի ուսանողները տեղեկացվել են գործատուների (հիմնականում բանկերի) կողմից ներկայացված աշխատանքի հայտարարությունների մասին՝ մրցույթի հայտ ներկայացնելու

նպատակով: Մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած ուսանողներին օգնություն է ցուցաբերվել փաստաթղթերի ձևակերպման հարցում:


Իրականացվել են շրջանավարտների փաստաթղթերի ձևակերպումներ, որոնք ուղարկվել են GNC ընկերություն, որի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատակիցները հարցազրույց են կազմակերպել ընտրված շրջանավարտների հետ:

Ինստիտուտի շրջանավարտները մասնակցել են «ՊրոԿրեդիտ» բանկի «Երիտասարդ բանկիրներ» ծրագրին:

Ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտներին առաջարկվել է դասվարի աշխատանք Լոռու մարզի Մարց գյուղի դպրոցում: Կազմակերպվել է հանդիպում դպրոցի տնօրենի և շրջանավարտների հետ, որի արդյունքում Ինստիտուտի մեկ շրջանավարտ այժմ աշխատում է վերոհիշյալ դպրոցում:


Դասախոսական համակազմ և ուսումնական բեռնվածություն

2012-13 ուսումնական տարվա ուսումնական բեռնվածքը կատարում է 264 դասախոս, որից պրոֆեսորի պաշտոն է զբաղեցնում 9-ը (3,4%), դոցենտի՝ 92-ը (34,8%), ասիստենտի և դասախոսի՝ 163-ը (61,7%):



Նկար 8. Դասախոսների թվաքանակը՝ ըստ պաշտոնների

Գիտական աստիճան և կոչում ունեն 153-ը (57,9%): Այդ թվում գիտությունների դոկտորի աստիճան ունեն 14-ը, թեկնածուի՝ 123-ը, առանց գիտական աստիճանի դոցենտի կոչում՝ 16-ը:




Նկար 9. Դասախոսների համակազմը՝ ըստ գիտական աստիճանների

Համակազմի 264 դասախոսներից 187-ը (70,8%) հիմնական հաստիքային անձնակազմից են: Նրանցից 72%-ն ունի գիտական աստիճան և/կամ կոչում:

Ինստիտուտի դասախոսների 58,3%-ը կանայք են (154), որից գիտական աստիճան և կոչում ունեն 70-ը (45,4%):

Որոշակիորեն մեծացել է երիտասարդ դասախոսների թիվը. այսօր դասավանդողներից 28-ի տարիքը չի անցնում 30-ից. ընդ որում գիտական աստիճան ունեն 4-ը՝ նախկին 2-ի փոխարեն: Միայն այս տարի աշխատանքի են հրավիրվել մեր բուհի 7 շրջանավարտներ: Պրոֆեսորադասախոսական կազմի մինչև 30 տարեկան դասախոսների թիվը հասել է 30-ի, 50-60 տարեկաններինը՝ 110-ի, 50-60 տարեկաններինը՝ 57-ի, 60-70 տարեկաններինը՝ 46-ի, 70-ից բարձր տարիք ունեցողներինը՝ 21-ի:



Նկար 10. Դասախոսների համակազմը՝ ըստ տարիքի

Վերջին տարիների ընդունելությունը, փոքրաթիվ ուսանողներով կուրսերի ձևավորումն իրենց բացասական ազդեցությունն են թողել դասախոս/ուսանող հարաբերակցության վրա. այն այսօր 1:11,4 է: Նույն իրավիճակն է ներկայացնում նաև ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը՝ 35,9:1, իսկ ուսանող/ոչ դասավանդող աշխատակից հարաբերակցությունը՝ 13,4:1:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կրթական գործունեությանը զուգահեռ Ինստիտուտում իրականացվում է նաև գիտահետազոտական գործունեություն, որի հիմնական նպատակն է ապահովել՝

- ➔ գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճ,

- ➔ երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ՝ նպատակ ունենալով իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխություն,
- ➔ հայազիտության ոլորտի զարգացման առաջնահերթությունը:

Ինստիտուտում անցկացվող հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքներն իրենց արտացոլումն են գտնում հրատարակված մենագրություններում, գիտական ժողովածուներում, առանձին հոդվածներում և հեղինակային իրավունքի ու ինտելեկտուալ սեփականության այլ նյութերում:

2012 թվականին պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատասիրությամբ հրատարակվել են 9 մենագրություն, 14 ուսումնամեթոդական ձեռնարկ, 4 բուհական դասագիրք, 218 գիտական հոդվածներ:

Ըստ ամբիոնների՝ կատարված գիտահետազոտական աշխատանքների վիճակագրությունը հետևյալն է.

Աղյուսակ 3. 2012 թվականին հրատարակված գիտական աշխատանքների քանակ՝ ըստ ամբիոնների

h/h	Ամբիոնի անվանումը	Թեզիս	Հոդված	Ուսումնամեթոդական աշխատանք	Մենագրություն/գիրք/բառարան/	Դասագիրք
1.	Մանկավարժության	-	8	-	1	-
2.	Հոգեբանության և սոցիոլոգիայի	-	19	-	-	-
3.	Հայոց լեզվի	-	25	1	1	-
4.	Գրականության	-	28	1	3	-
5.	Օտար լեզուների	-	12	-	-	-
6.	Ռուսաց լեզվի	-	21	-	-	-
7.	Պատմության	-	9	-	-	-
8.	Տնտեսագիտության տեսության	-	7	4	-	-
9.	Փիլիսոփայության և քաղաքագիտության	-	14	-	-	1
10.	Բուսաբանության և աշխարհագրության	-	18	-	-	3
11.	Կենդանաբանության, ֆիզիոլոգիայի և	-	8	-	1	-

	բժշկագիտության հիմունքների					
12.	Քիմիայի	5	8	2	-	-
13.	Մաթեմատիկական անալիզի	-	2	1	-	-
14.	Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի	-	2	1	-	-
15.	Ինֆորմատիկայի և տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների և մոդելավորման	-	10	1	-	-
16.	Ֆիզիկայի	-	16	1	1	-
17.	Ընդհանուր ֆիզիկական դաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	-	7	2	2	2
18.	Ֆիզդաստիարակության տեսության և մեթոդիկայի	-	1	1	-	-
19.	Արվեստի	1	76	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		3	218	14	9	4

2011 թ.-ի համեմատ հոդվածների թիվն ավելացել է 16-ով, ուսումնամեթոդական աշխատանքների թիվը՝ 9-ով, հրատարակված մենագրությունների թիվը՝ 2-ով, դասագրքերի թիվը՝ 3-ով: Դասագրքերի, մենագրությունների և ուսումնամեթոդական աշխատանքների թվի ավելացումը պայմանավորված է նաև Ինստիտուտում խրախուսանքի կանոնակարգված տարակարգերի առկայությամբ:

Ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքը սերտորեն կապված է կրթական գործունեության հետ. ամեն տարի մեծանում է այն ուսանողների թիվը, ովքեր ներգրավված են գիտահետազոտական աշխատանքների մեջ: Ուսանողները մասնակցում են գիտահետազոտական կոնֆերանսներին, սեմինարներին, մրցույթներին, որոնք անցկացվում են ինչպես ներքուհական, այնպես էլ միջբուհական և հանրապետական մակարդակներով: Գիտաժողովներում ուսանողների ներկայացված լավագույն զեկուցումները հրատարակվում են ուսանողական հետազոտական աշխատանքների ամենամյա ժողովածուի մեջ:

Ինստիտուտի հավատարմագրմանը, կրթության որակին ներկայացվող կարևորագույն պահանջներից մեկը պրոֆեսորադասախոսական համակազմի որոշակի հարաբերակցությամբ գիտական աստիճան և կոչում ունենալու ինդիքն է: Այս տեսանկյունից տարբեր ձևերով աջակցություն է

ցուցաբերվում գիտական աստիճան և կոչում ստանալու գործընթացներին:

2012 թ. գիտությունների դոկտորի աստիճան է ստացել 2, գիտությունների թեկնածուի աստիճան՝ 8 աշխատակից:

2012 թվականին Ինստիտուտի գիտխորհրդի կողմից պրոֆեսորի և դոցենտի գիտական աստիճան է ստացել թվով 3 աշխատակից:

Հաշվետու տարվա մայիսին կազմակերպվել է ուսանողական հանրապետական գիտաժողով: Մասնակցել են հանրապետության 8 բուհերի 107 ուսանողներ, որոնցից 42-ը՝ Ինստիտուտից: Տպագրության է ներկայացվել 51 աշխատանք:

Ընդհանուր առմամբ, ընթացիկ տարում ուսանողական գիտական ընկերության հանրապետական գիտաժողովներից Ինստիտուտից մասնակցել է 80 ուսանող:

Իրականացվել է ֆիզիկա, մաթեմատիկա և ինֆորմատիկա մասնագիտությունների գիտական հոդվածների ժողովածուի առաջին պրակի հրատարակությունը: Տպագրության է պատրաստվում երկրորդ պրակը:

Հաշվետու տարվա ընթացքում Ինստիտուտում կազմակերպվել են հետևյալ միջազգային և հանրապետական գիտաժողովները.

ա/ միջազգային գիտաժողով՝ նվիրված հայկական գրատպության 500-ամյակին,

բ/ հանրապետական գիտաժողով՝ «Կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը կրթական համակարգում»,

գ/ հանրապետական գիտաժողով՝ նվիրված Ժան-Ժակ Ռուսոյի ծննդյան 300-ամյակին:

Նշված գիտաժողովներին ներկայացվել են 80 աշխատանքներ, այդ թվում նաև Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական համակազմից՝ 37, Հայաստանի և Արցախի բուհերից՝ 38, արտերկրից՝ 5 աշխատանքներ:

Երիտասարդ գիտնականների հանրապետական չորրորդ գիտաժողովը, որը նախատեսված էր անցկացնել սույն թվականի հոկտեմբերին, չի կայացել գիտաժողովի հրավերին փոքրաթիվ արձագանքների պատճառով:

Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման համար կարևոր է Ինստիտուտի գիտական գրադարանի աշխատանքների ճիշտ կազմակերպումը: Գրադարանում իրականացվում է ուսանողների և Ինստիտուտի աշխատակիցների սպասարկում արժեքներին բաժնում, երկու ընթերցասրահներում և մամուլի բաժնում:

Գրքային ֆոնդի քանակը կազմում է 226 462 միավոր:

Համալրված գրականության քանակը կազմում է 1266 միավոր, հնատիպ գրականության քանակը՝ հայերեն 1272 միավոր, ռուսերեն՝ 1633 միավոր, գերմաներեն՝ 15 միավոր /ծախսը 1 068 150 դրամ/:

Աղյուսակ 4. Համալրված գրականության և գրքային ֆոնդի քանակը

h/h	Անվանումը	Քանակը/միավոր/
1.	Նվիրատվության կարգով ստացվել է	89
2.	Համալրված գրականության քանակը	1266
3.	Հնատիպ գրականության քանակը	1272 /հայերեն/
		1633 /ռուսերեն/
		15/գերմաներեն/
4.	Գրքային ֆոնդի քանակը	226 462

Նվիրատվության կարգով ստացվել է 886 միավոր գիրք:

Այս տարվա մուտքագրված գրականության մեջ մաս են կազմում նաև բուհական դասագրքեր (62), մեթոդական ձեռնարկներ (211), ուղեցույցներ, որոնց ընդհանուր թիվը կազմում է 267 միավոր (նախորդ տարվա 212 միավորի փոխարեն):

Ընթերցողների թիվը կազմել է 2287 հաճախորդ, հաճախումների թիվը՝ 39115, տացքը՝ 39057: Մատենագիտական հարցումով գրավոր և բանավոր դիմել է 1412 ուսանող և 54 դասախոս:

2012 թ.-ին ստացվել է 27 անուն պարբերական հրատարակություն, որից 9-ը Ռուսաստանի Դաշնության հրատարակություններ են:

Բաժանորդագրության համար 1-ին և 2-րդ կիսամյակներում ծախսվել է 924 150 դրամ, (218 630 դրամը ծախսվել է ռուսական պարբերական հրատարակությունների ձեռքբերման համար):

Իսկ Ռուսաստանի Դաշնության հյուպատոսության միջոցներով բաժանորդագրվել է 1-ին կիսամյակում՝ 8 անուն (408800 դրամի), 2-րդ կիսամյակում՝ 5 անուն (235400 դրամի) պարբերական:

Դասախոսական տեքստերից թղթային տարբերակով օգտվել է 1897 ուսանող, էլեկտրոնային տարբերակով՝ 1990 ուսանող:

ՄԻՆՉԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտը մեծ նշանակություն է տալիս դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներին: Դպրոցականների մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը նպաստելու նպատակով կատարվել են այցելություններ մարզի քաղաքների և մի շարք գյուղական համայնքների դպրոցներ, որտեղ ընդհանուր առմամբ անցկացվել են թվով 32 հանդիպումներ բարձր դասարանների աշակերտների և նրանց ծնողների հետ: Այդ հանդիպումների ընթացքում անհրաժեշտ պարզաբանումներ են տրվել Ինստիտուտի մասնագիտությունների, ընդունելության քննությունների, վարձավճարների և կատարվող զեղչերի, աշակերտներին և ծնողներին հուզող մի շարք հարցերի վերաբերյալ: Հանդիպումների ընթացքում բաժանվել են քննական առարկաների հարցաշարեր, բուկլետներ, այլ տպագիր նյութեր:

Ներկայումս Ինստիտուտի կրթական բարեփոխումների և կապերի բաժինը շարունակում է իր աշխատանքները վերոնշյալ ուղղություններով՝ համաձայն բաժնի աշխատանքային պլանի:

Մասնագիտական կողմնորոշմանը մեծապես նպաստում են նաև դիմորդների համար Ինստիտուտում կազմակերպվող անվճար նախապատրաստական դասընթացները, որոնք անցկացվում են բոլոր քննական առարկաներից: Տվյալ դասընթացների նպատակն է օգնել անապահով ընտանիքների երեխաներին ընդունվելու և սովորելու Ինստիտուտում իրենց նախընտրած մասնագիտություններով:

2012 թ.-ին այդ դասընթացներին մասնակցել են Վանաձոր քաղաքի և հարակից գյուղերի ավարտական դասարանների թվով 35 աշակերտ, 16-ը՝ մեր վարժարանից: Դասընթացներն իրականացվել են համապատասխան ամբիոնների դասախոսների կողմից: Ինստիտուտի կողմից նման նախապատրաստական դասընթացներ

անցկացվել են նաև Ալավերդի և Սպիտակ քաղաքներում, պարապմունքները վարել են տեղերի փորձառու մասնագետները:

Արդյունքում այդ պարապմունքներին հաճախած և Բնստիտուտ դիմած աշակերտների 50%-ից ավելին հաջողությամբ հանձնել են ընդունելության քննությունները և ընդունվել Բնստիտուտի առկա և հեռակա ուսուցման տարբեր բաժիններ:

Հաշվի առնելով 2012 թ.-ի գարնանը դիմորդների համար նախապատրաստական դասընթացների իրականացման փորձն ու դրական արդյունքները՝ այդ աշխատանքները կազմակերպվում են արդեն աշնանը և շարունակվելու են մինչև դպրոցների միասնական քննությունների սկիզբը: Անհրաժեշտ է նշել, որ մասնակիցների թիվը գարնանային նախապատրաստական դասընթացների համեմատ մեծացել է ավելի քան 3 անգամ:

2012 թ. նոյեմբերից, արձագանքելով ՀՀ կառավարության 2012 թ. փետրվարի 2-ի նիստի N4 արձանագրային որոշմանը՝ Բնստիտուտը մասնակցում է «Հայաստանի հանրապետության ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթական կարիքների գնահատման, աջակցության և մոնիթորինգի իրականացման» ծրագրին, որի նպատակը անապահով ընտանիքների հիշյալ տարիքի երեխաների մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունները մեծացնելն է՝ դրանով աջակցելով այդ ընտանիքին ներգրավվելու սոցիալական ակտիվ ծրագրերում, բարձրացնելու ընտանիքի բարեկեցության մակարդակը:

Ծրագրին Բնստիտուտի մասնակցությունն իրականացվում է կրկնուսույցներով ապահովմամբ, համապատասխան լսարանների տրամադրմամբ և բուհերի ընդունելության ծրագրերին համապատասխան դասընթացների կազմակերպմամբ:

Աշխատանքներն սկսվել են հոկտեմբերի սկզբից, և տարբեր առարկաներից պարապմունքներին մասնակցում են Վանաձոր քաղաքի ու մոտակա գյուղերի անապահով ընտանիքների 16-18 տարեկան 11-րդ և 12-րդ դասարանների 150-ից ավելի աշակերտներ, որոնք ցանկություն են հայտնել սովորելու հանրապետության տարբեր բուհերում:

Կամավորության սկզբունքով կազմվել են կրկնուսույցների խմբեր ամբիոնների առաջատար դասախոսներից և մագիստրատուրայի ու բակալավրիատի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներից (տարբեր մասնագիտություններով՝ մոտ 60 կամավորներ):

Պարապմունքներն իրականացվում են հիմնականում մագիստրոսների կողմից, ընդ որում, Գիտխորհրդի որոշմամբ այդ աշխատանքը նրանց համար գնահատվում է որպես մանկավարժական պրակտիկա:

ՔՈՒԵՁ

2012 թ. քուլեջում կատարվել է ընդունելություն հիմնական կրթության հիման վրա 0207 «Թարգմանություն և գործավարություն՝ բաժնում: Առկա ուսուցման համակարգի «Թարգմանություն և գործավարություն» բաժնում ընդունվել են 23 ուսանողներ, որոնցից երկուսը սփյուռքահայեր են, մեկը՝ առանց ծնողական խնամքի: Քուլեջում ուսուցումը կազմակերպվում է առաջին կուրսում հանրակրթական, երկրորդ կուրսից սկսած՝ մոդուլային համակարգով:

Միայն աշխատանքային գործունեության ընթացքում կազմվել է քուլեջի մեթոդմիավորման խորհուրդ, ընտրվել են խորհրդի անդամներ, հաստատվել է մեթոդմիավորման խորհրդի աշխատանքային պլանը:

Անցկացվել են քուլեջի մանկավարժական խորհրդի նիստեր, որոնց ժամանակ պարբերաբար լսվել են քննարկումներ՝ կապված քուլեջի գործող բաժնի ուսանողական պլանների, մոդուլային համակարգի, օրացուցային պլանների, ուսանողների և աշխատողների կարգապահական հարցերի, քննաշրջանների, ընթացիկ ստուգումների հետ:

Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթում ստուգողական աշխատանքներ են անցկացվել բոլոր առարկաներից և կատարվել է մոնիթորինգ: Ընթացիկ ստուգումներն (ստուգողականները) անցկացվել են թեստերով, ինչը հնարավորություն է տվել կարճ ժամանակահատվածում ստուգելու մեծաթիվ ուսանողների: Ընթացիկ ստուգումներից «անբավարար» ստացած ուսանողների

հետ անցկացվել են լրացուցիչ պարապմունքներ՝ նախօրոք կազմված ժամանակացույցով:

Դասախոսները դասերի ժամանակ կիրառել են ժամանակակից տեխնոլոգիաներ, ինտերակտիվ գրատախտակ:

Կատարվում են բուհ-դպրոց կապի ամրապնդման աշխատանքներ մարզի և քաղաքի մի շարք դպրոցների հետ: Ակտիվ կապ է ստեղծվել քաղաքի թիվ 2, 7, 28 դպրոցների հետ:

Նոր մեթոդների յուրացման և հմտությունների ձեռքբերման նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ: Մոդուլային համակարգի ուսուցման հետ կապված՝ կապ է պահպանվում այլ քոլեջների և դասախոսական համակազմի հետ: Մասնագիտական առարկաների դասախոսները անցել են վերապատրաստման դասընթացներ՝ կազմակերպված ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից:

Կազմակերպվել են բաց դասեր անգլերեն լեզու և ինֆորմատիկա առարկաներից՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումով: Անգլերենի դասերի մի մասը անցկացվել է լինգվաֆոնային կաբինետում:

Ուսանողներն ակտիվ համագործակցում են ուսխորհրդի հետ, մասնակցում բնապահպանական միջոցառումներին: Մշակութային կենցաղը զարգացնելու նպատակով ուսանողները պարբերաբար մասնակցել են քաղաքի մշակութային միջոցառումներին:

Կազմակերպվել են այցեր՝ Ստեփան Զորյան տուն-թանգարան, մանկատուն, պատկերասրահ:

Ուսանողներն ընդգրկված են ինստիտուտում գործող ժողովրդական երգի, երաժշտական ռիթմիկայի խմբակներում:

Ուսանողների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով այց է կազմակերպվել թիվ 63583 զորամաս՝ զինվորների առօրյայի, նորագույն տեխնիկայի և քաղպաշտպանության ժամանակակից միջոցներին ծանոթացնելու համար:

Պարբերաբար կազմակերպվել են գրույցներ սեռական դաստիարակության, էթիկայի նորմերի, առողջ ապրելակերպի, հաղորդակցման կանոնների շուրջ:

Հրավիրվել են ծնողական ժողովներ, և քննարկվել է յուրաքանչյուր ամսվա վերջին կատարված ստուգողական

աշխատանքների, առաջին և երկրորդ կիսամյակի քննությունների և ստուգարքների արդյունքները :

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2012-2013 ուսումնական տարում հենակետային վարժարան ընդունվել է 133 աշակերտ: Ներկայումս վարժարանն ունի 369 աշակերտ: Զգալի աշխատանքներ են տարվել ուսուցման որակի բարձացման ուղղությամբ: Այս գործին էականորեն նպաստել է այն հանգամանքը, որ ինստիտուտի 6 դասախոսներ համալրել են վարժարանի ուսուցչական համակազմի շարքերը: Տարվա ընթացքում 7 ուսուցիչ անցել է որակավորման բարձրացման դասընթացներ:

Վարժարանը ուսուցման որակի բարձրացման նպատակով համագործակցում է Ինստիտուտի ամբիոնների հետ, մասնավորապես սերտ կապեր ունի Փիլիսոփայության և քաղաքագիտության, Պատմության, Ինֆորմատիկայի, ՄԴՄ և Ֆիզիկայի ամբիոնների հետ: Հնարավորություն է ընձեռվել օգտագործելու Ինստիտուտի բոլոր լաբորատորիաները և համակարգչային լսարանները:

Անցած ուսումնական տարում վարժարանի հումանիտար հոսքի 10-12-րդ դասարանների 224 աշակերտներից 5-ը գերազանց առաջադիմություն են ցուցաբերել, 43-ը՝ հարվածային, վերաքննություն են ունեցել 5-ը: Բնագիտամաթեմատիկական հոսքի 139 աշակերտներից ոչ մեկը գերազանց առաջադիմություն չի ցուցաբերել, 17 աշակերտ եղել է հարվածային, վերաքննություն ունեցել են 13-ը:

Հումանիտար հոսքում առաջադիմությունը կազմել է 97%, բնագիտամաթեմատիկական հոսքում՝ 90%:

Այս տարի վարժարանի 26 աշակերտ մասնակցել են առարկայական օլիմպիադաների քաղաքային փուլին: Մարզային փուլը հաղթահարած 11 աշակերտներից 5-ը անցել են հանրապետական փուլ: Վարժարանի 65 աշակերտ մասնակցել է Ինստիտուտում կազմակերպված ասմունքի մրցույթին: Աշակերտներն ակտիվորեն մասնակցել են նաև «ԱՅԲ» հիմնադրամի կազմակերպած «Կենդուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթներին:

Այս տարվա 112 շրջանավարտներից 56-ն ընդունվել են մեր բուհը, 12 աշակերտներ էլ ընդունվել են հանրապետության այլ բուհեր: 200 ժամից ավելի բացակա ունենալու պատճառով 3 աշակերտ չեն մասնակցել ավարտական քննություններին և ատեստատ չեն ստացել:

Վարժարանի աշակերտները որոշակի ձեռքբերումների են հասել նաև սպորտի բնագավառում: Ինստիտուտի թիմի կազմում մասնակցել են շախմատի և թեթև աթլետիկայի առաջնություններին, ունեն նաև անհատական և թիմային հաջողություններ: մասնավորապես հրաձգության քաղաքային առաջնությունում վարժարանի թիմը գրավել է առաջին տեղը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Ինստիտուտում որոշակի աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ: Առավել ուշադրություն են դարձվել ուսանողների, աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Նշված ծրագրերի իրականացման համար կարևոր է «Բազում» մարզաառողջարանային հանգրվանի դերը, որն աստիճանաբար սկսել է Ինստիտուտի ստորաբաժանումների համար ծառայել որպես տարաբնույթ միջոցառումներ և հանգստի ժամանցային միջոցառումներ կազմակերպելու վայր: Գործող կարգի համաձայն՝ հանգրվանը տրամադրվում է նաև Ինստիտուտի աշխատակիցներին ընտանեկան միջոցառումներ կազմակերպելու համար:

Ինստիտուտում գործող՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի աշխատակիցներին և ուսանողներին դրամական օգնություն, աջակցություն, պարգևատրում տալու» կարգի համաձայն՝

- ➔ Ինստիտուտի 20 աշխատակիցներ հոբելյանական ծննդյան տարեթվի կապակցությամբ պարգևատրվել են շնորհակալագրերով և դրամական պարգևներով՝ 2 146 600 դրամ,
- ➔ 14 աշխատակիցների հատկացվել է դրամական օգնություն 1 150 450 դրամ,

- ➔ Ինստիտուտի 19 աշխատակիցներ տարբեր գիտական աշխատությունների լույս ընծայման, իսկ որոշ աշխատակիցներ էլ հասարակական աշխատանքներում ակտիվ մասնակցության համար խրախուսվել են 615 000 դրամի չափով,
- ➔ առկա ուսուցման համակարգում սովորող և առաջին անգամ ամուսնացող, առաջին անգամ երեխա ունեցող զույգին հատկացվել է միանվագ աջակցություն՝ 50 000 դրամի չափով /200.000 դրամ/,
- ➔ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ մինչև 12 տարեկան երեխա ունեցող 72 աշխատակցի հատկացվել է 505 000 դրամ՝ մեկ երեխային՝ 5 000 դրամի չափով:
- ➔ Ինստիտուտի աշխատակիցների՝ թվով 37 երեխաներ իրենց ամառային 10-օրյա հանգիստն են անցկացրել «Բազում» մարզաառողջարանային հանգրվանում կազմակերպված ճամբարում:
- ➔ Ինստիտուտի թվով 28 աշխատակիցների հատկացվել են Վանաձորի «ԱՄԱԸ» առողջարանի ուղեգրեր:
- ➔ Ինստիտուտի աշխատակիցներին և ուսանողներին հատկացվել են տարբեր թատերական և այլ ներկայացումների ընդհանուր թվով 1200 տոմսեր:
- ➔ Արհկոմը, համագործակցելով մշակույթի, մարզառազմական և հայրենասիրական դաստիարակության կենտրոնների, ուսանողական խորհրդի հետ՝ 2012 թ. ֆինանսավորել կամ համաֆինանսավորել է բազմաբնույթ միջոցառումներ /Ամանոր, Մարտի 8, Ապրիլի 7, Հաղթանակի օր, Անկախության օրվան նվիրված միջոցառումներ, հանդիպում անվանի դերասանների հետ, գրադարանավարի օր, տարբեր էքսկուրսիաներ և այլն/՝ հատկացնելով 1 277 000 դրամ:
- ➔ Ինստիտուտի և «ՎիվաՄեյ-ՄՏՍ» ընկերության համագործակցության շնորհիվ կնքվել են պայմանագրեր ընկերության և ուսանողների միջև, որի արդյունքում

ուսման վճարի լրիվ փոխհատուցում ստացել է թվով 22 ուսանող:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի համար հրամայական խնդիր է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումն ու ինտեգրումը ուսումնական, գիտական, կառավարման բոլոր գործընթացներում և դրանց համար անհրաժեշտ տեղեկատվական ենթակառուցվածքի ձևավորումը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Տեղակայվել են Microsoft ընկերության կողմից լիցենզավորված Windows 7 օպերացիոն համակարգեր (80 համակարգիչ) և Microsoft Office 2007 ծրագրային փաթեթներ (50 համակարգիչ):
- Ուսումնասիրվել են տերմինալ սերվերների կազմակերպման եղանակները և աշխատանքի սկզբունքները, տարբեր համակարգերի հիմքի վրա տեղակայվել և փորձարկվել է 2 փոքր տերմինալ սերվեր՝ հետագայում Ինստիտուտում լիարժեք սերվեր կազմակերպելու նպատակով:
- Բարձրացվել է Համացանցի արագությունը, ավելացել է այն օգտագործողների քանակը:
- Իրականացվել է Ինստիտուտում առկա համակարգիչների անձնագրավորում. գույքագրվել են բոլոր համակարգիչներն՝ իրենց հնարավորինս մանրամասն չափանիշներով:
- Մպասարկող կազմակերպության հետ համատեղ իրականացվել են Ինստիտուտի ավելի քան 200 համակարգիչների ապարատային և ծրագրային լիարժեք պրոֆիլակտիկ աշխատանքներ:
- Տեղադրվել են մինի սերվերային 3 համակարգեր լսարաններում: Վերականգնվել է Ս. Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնի սերվերային համակարգը: Կազմակերպվել է ներքին ցանց «Մանկավարժության և

հոգեբանության» կաբինետում՝ WiFi ցանցի հետ աշխատելու հնարավորությամբ:

- ➔ Վերակազմակերպվել է ներքին ցանցը լրագրության կաբինետում և վարժարանում: Վերջիններիս հնարավորություն է տրվել օգտվելու Համացանցից «Մանկավարժության և հոգեբանության» լսարանում և գրադարանում տեղակայված HOME-ZONE սարքավորումների կապի միջոցով:
- ➔ Բնատիտուտի գրադարանի ընթերցասրահում և բակում ուսանողներին հնարավորություն է ընձեռվել անվճար օգտվելու Համացանցից WiFi կապի միջոցով:
- ➔ Ներքին ցանցին են միացվել ձեռք բերված նոր համակարգիչները:
- ➔ Բնատիտուտում առկա պահեստամասերից հավաքվել է 3 համակարգիչ, որոնք հանձնվել են տարբեր ստորաբաժանումների՝ ըստ անհրաժեշտության:

«ՎիվաՄեյ-ՄՏՍ» ընկերության՝ բուհերի տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում Բնատիտուտում նվիրաբերվել են 12 համակարգիչ, 1 տեսապրոյեկտոր, 1 ինտերակտիվ գրատախտակ և Համացանցի հետ WiFi կապ ապահովող 2 HomeZone սարքավորում, որը հնարավորություն կտա մատչելի դարձնելու Համացանցը:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2012 թ. հունվարի 27-ին կայացած Բնատիտուտի Խորհրդի նիստով տարվա համար հաստատված բյուջեի գումարը կազմել է 856954,0 հազար դրամ, որը բաշխվել է Բնատիտուտի կարիքներին համապատասխան ուղղություններով:

Աշխատավարձի և սոցիալական վճարների համար հատկացվել է 669817,0 հազար դրամ, որը կազմում է բյուջեի 78.2%-ը:

Մնացած գումարները տրամադրվել են գգույքի ,դեղորայքի, կապիտալ ձեռքբերումների, հարկերի վճարմանը, որն իրականացնելու համար փետրվարի 12-ից սկսել ենք գնումների

հետ կապված գործընթացները: Կնքել ենք պայմանագրեր /Առյուսակ 5/:

Ինստիտուտի աշխատանքները արդյունավետ կատարելու համար կնքվել են նաև այլ պայմանագրեր.

1. Մարզադահլիճների վարձակալության համար փոխանցվել է ընդամենը 1230,0 հազար դրամ, այդ թվում`

- «Սպորտ ԿԼԱՍ» ՍՊԸ - 160,0 հազ. դրամ
- Լոդի մանկապատանեկան մարզադպրոց - 75.0 հազ. դրամ
- «Կենտրոն» համալիր մարզադպրոց - 300,0 հազար դրամ
- Թիվ 6 դպրոց - 330,0 հազար դրամ
- Հայաստան ՄՀԿ - 150,0 հազար դրամ
- Ֆուտբոլի մարզադպրոց - 150,0 հազար դրամ
- «Հայաստան» ՄՀԿ - 140.0 հազ. դրամ

2. Հայտարարություններ և գովազդ ընդամենը 989,0 հազար դրամ, այդ թվում

- «Արտգար» ՍՊԸ - 240,4 հազար դրամ
- «Լոռու Թի Վի» ՍՊԸ - 239,0 հազար դրամ
- «Արաքս» հրատարակչություն - 113.0 հազար դրամ
- «Լոռի ՄԻԳ» ՍՊԸ - 90,0 հազար դրամ
- «Լոռու մարզ» թերթի խմբագրություն - 86,0 հազար դրամ
- «Սիմ տպագրատուն» - 29,1 հազար դրամ
- «Հանրապետություն» ՓԲԸ - 16,5 հազար դրամ
- «Ֆորտունա» ՍՊԸ - 175,0 հազար դրամ

3. Պրակտիկա բուժհիմնարկներում և բուժսպասարկում ընդամենը 66,2 հազար դրամ, այդ թվում

- «Վանֆարմ» ՍՊԸ - 66,2 հազար դրամ,

Աղյուսակ 5.Գնումների գործընթացի արդյունքում կնքված պայմանագրերը

<i>h/h</i>	<i>Պայմանագրի ծածկագիրը և համարը</i>	<i>Անվանումը</i>	<i>Կազմակերպությունը</i>	<i>Գումարը/ հազ. դրամ/</i>
1.	ՎՊՄԻ ԱՊԶԲ 12/01	Համակարգչային տեխնիկա և մասեր	«Վեներա Դավթյան» Ա/Ձ	8.641,6
2.	ՎՊՄԻ ԱՊԶԲ 12/02	Տնտեսական նյութեր	«Արթուր Օհանյան»Ա/Ձ	2629,7
3.	ՎՊՄԻ ԱՊԶԲ 12/03	Բենզին և դիզ. վառելիք	«Ֆլեշ» ՍՊԸ	5.025,0
4.	ՎՊՄԻ ԱՊԶԲ 12/04	Գրասենյակային պարագաներ, թուղթ	«Ռաֆայել Հարությունյան» Ա/Ձ	1.785,3
5.	ՎՊՄԻ ԱՊԶԲ 12/05	Դեղորայք	«Հասմիկ ֆարմ» ՍՊԸ	581,0
6.	ՎՊՄԻ ԱՊԶԲ 12/07	Սպորտ գույք	«Ռաֆայել Հարությունյան»Ա/Ձ	1.209,1
7.	ՎՊՄԻ ՇՀ ԾՁԲ 12/01	Ինտերնետ կապ	«ՎԵԲ»ՍՊԸ	576,0
8.	ՎՊՄԻ ԾՁԲ 12/02	Համակարգչային տեխնիկայի սպասարկում	«Սի Էնդ Փի Էս» ՊԸ	1.400,0
9.	ՎՊՄԻ ԲԸԾՁԲ 12/03	Շինարարության տեխն. Վերահսկողություն	«Է Կարախանյան և ընկ.»ՍՊԸ	230,0
10.	ՎՊՄԻ ՇԱՁԲ 12/01	Շինարարական աշխատանքներ/Բազումի հանգրվանի բակի բարեկարգում, պարիսպի նորոգում/	«Արտադրական բազա» ԲԲԸ	13.595,7
12	ՎՊՄԻ ՇԱՁԲ 12/02-	Շինարարական աշխատանքներ/լուսամուտների տեղադրում/	«Մանվել Մանուկյան» Ա/Ձ	6.327,1

4. Պրակտիկա դպրոցներում, թանգարաններում, քաղաքապետարանում, քոլեջներում, տարեցների տանը, ՀՀ ԳԱԱ բուսաբանական այգում, Լոռու մարզի արխիվում՝ ընդամենը 4.005,6 հազար դրամ;

5. «Ոսկան Երևանցի» տպագրատուն/դիպլոմներ - 3.568,0 հազ.դրամ ;


6. Հիմնադրամներին - ընդամենը 10550,0 հազ. դրամ;

7. Գրքերի, հանդեսների ձեռքբերում, գիտաժողովի նյութերի տպագրություն - 1919,0 հազ. դրամ:


Պայմանագրերով նախատեսված աշխատանքները կատարվել են պատշաճ մակարդակով և ժամանակին:

Ավարտվել են Բագումի մարզաառողջարանային համալիրի բակի բարեկարգման, պարսպի և հենապատի կառուցման շինարարական աշխատանքները: Ընթացքի մեջ է վարժարանի թևի հին լուսամուտների փոխարեն նորերի տեղադրման աշխատանքը:

Գրաֆիկական տեսքով ներկայացված են 2012թ. եկամուտները և ծախսերը.




Նկար 10. 2012թ. եկամուտները




Նկար 11. 2012 թ. ծախսերը

2012 թ. բյուջեն Ինստիտուտը կատարելու է 100.2 տոկոսով: Առկա ուսուցման բակալավրիատի ուսման վարձի միջին չափը 2012 թ. կազմում է 265.000 դրամ, մագիստրատուրայինը՝ 250.000 դրամ, հեռակա ուսուցման բակալավրիատինը՝ 157.000 դրամ:


Պետական բյուջեից ֆինանսավորումները ստացվում են սահմանված ժամանակացույցով: Պետական ֆինանսավորմամբ ուսման վճարի միջին չափը կազմում է 295.000 դրամ:



Նկար 11. Ինստիտուտի բյուջեն 2008-2012թթ. /հազար դրամ/




Նկար 11. Աշխատավարձի ընդհանուր ծավալը 2008-2012 թթ. /հազար դրամ/



Նկար 12. Կապիտալ ծախսերի ներդրման ծավալները 2008-2012 թթ. /հազար դրամ/

հազար դրամ



Նկար 13. Սարքավորումների ձեռքբերման պատկերը 2008-2012 թթ. /հազար դրամ/

Այստեղից երևում է, որ բյուջեի հինգ տարվա ընթացքում ծավալը ավելացել է 6.7 տոկոսով: Դրան համապատասխան ավելացել է նաև աշխատակիցների աշխատավարձերը 2008 թ համեմատ 38.5 տոկոսով, իսկ վերջին չորս տարվա ընթացքում՝ միջինը 10 տոկոսով: Կապիտալ ներդրումների և սարքավորումների ձեռքբերման ծավալները որոշվում են տվյալ տարվա համար ծագած պահանջից:

Նախորդ երկու տարիների ընթացքում Բնստիտուտի համախառն բյուջեի և հիմնական ծախսերի մասին տեղեկություններ կարող ենք ստանալ ստորև բերված աղյուսակից.

Աղյուսակ 6. Նախորդ երկու տարիների ընթացքում Ինստիտուտի համախառն բյուջեի և հիմնական ծախսերը.

h/h	Անվանումը	2011թ	2012թ	Ընդամենը	% ձևում
				2011-12թթ.	
Ընդամենը բյուջե /հազ. դրամ/		848 911.2	856 954		0.9
<i>այդ թվում</i>					
1	աշխատավարձ	563788.3	56 7 674		0.68
2	գույք	8 890	2570	11 460	
3	սարքեր և սարքավորումներ	11 495.8	10 595.5	22 091.3	
4	կապիտալ ներդրումներ	17 704.5	22 000	39 704.7	
5	այլ ծախսեր	41 250	56 350	102 403.2	
6	կապ	9 590	7 020	16 610	
7	Էլ. Էներգիա, վառելիք /գազ/	20 890	22 122	43 012	

Տնտեսական աշխատանքների գծով հաշվետու տարվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- գլխավոր մասնաշենքի «մանկավարժության և հոգեբանության» կաբինետի վերանորոգում դարձնելով ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՄ-ի համակարգչային կենտրոն,
- գրադարանի ընթերցասրահի վերանորոգում,
- ուսումնական 2-րդ մասնաշենքում թիվ 45 և 46 սենյակների վերանորոգում՝ լամինատե հատակների կառուցմամբ,
- կատարվել է 2-րդ ուսումնական մասնաշենքի նկուղային հարկում խմելու ջրի ջրագծի վթարի վերացում,
- Ս. Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնում կատարվել են ջրի ծորակների նորոգումներ և կոյուղու վթարի վերացում,
- ջեռուցման ապահովման շրջանակներում կատարվել են ձմռան նախա-պատրաստական աշխատանքներ շենքերի տանիքներում և նկուղներում,

- ➔ վթարի հետևանքով կարճ ժամկետում վերանորոգվել է վարչական մասնաշենք մտնող ջրամատակարարման խողովակը,
- ➔ կատավել է Ինստիտուտի կաթսայատան հին հաշվիչի և կարգաբերիչի ապամոնտաժում և նորերի տեղադրում, որոնք հնարավորություն կտան տնտեսելու ջեռուցման համար օգտագործվող գազի ծախսը,
- ➔ կատարվել են կաթսայատան ջեռուցման պոմպերի վերանորոգում, ընդհանուր կաթսայատների կարգաբերումներ, ջեռուցման համակարգի զննում և նկատված թերությունների վերացումներ,
- ➔ Ինստիտուտի բոլոր մասնաշենքերի միջանցքների համար ձեռք են բերվել մեծ հայելիներ և փակցվել համապատասխան տեղերում,
- ➔ Գր.Լուսավորիչի 47 հասցեում գտնվող արվեստի ամբիոնի մասնաշենքում կատարվել է ամբիոնի հատակի լամինացում, աստիճանավանդակի ներկում, պատուհանների նորոգում,
- ➔ կատարվում է ամենօրյա շենքերի, շինությունների, բակի մաքրում,
- ➔ կատարվում է ամենօրյա շրջայցեր էլեկտրամատակարարումը Ինստիտուտում պատշաճ մակարդակի վրա պահելու համար,
- ➔ տարհանման ուղիները միշտ պահվում են գործածելի վիճակում՝ անհրաժեշտության դեպքում ազատելով ավելորդ գույքից,
- ➔ կատարվել են մասնաշենքերի տանիքների և մուտքերի ծածկերի ջրահեռացման մասնակի նորոգումներ,
- ➔ կատարվել են ուսումնական գույքի անհրաժեշտ տեղափոխություններ և նորոգումներ,
- ➔ կատարվել են կոյուղագծերի վթարների վերացում:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանք հանրապետության այլ բուհերի հետ:
 Ինստիտուտը սերտորեն համագործակցում է հանրապետության մի շարք բուհերի հետ՝ անդամակցելով միջբուհական

կոնսորցիումներին (ՀՀ մանկավարժական բուհերի կոնսորցիում և լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման), կամ ուղղակի կապեր հաստատելով այլ բուհերի հետ՝ ուսումնական գործընթացի բարեփոխումների իրականացման, կրթական ծրագրերի կատարելագործման, նոր ծրագրերի նախագծման, մշակման և ներդրման, դրամաշնորհային տարբեր ծրագրերում մասնակցելու համար միասնական թիմով հանդես գալու նպատակով և այլն:

Այլ բուհերի հետ համագործակցությունը մեծապես նպաստում է Ինստիտուտում ուսուցման որակի բարձրացմանը, առաջընթացի ապահովմանը:

Ինստիտուտի դասախոսները և ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել հանրապետությունում անցկացվող գիտաժողովներին և հյուրընկալել են հանրապետության այլ բուհերի ներկայացուցիչներին՝ Ինստիտուտում կազմակերպվող գիտաժողովներին մասնակցելու նպատակով:

Ընդհանուր առմամբ նշված ժամանակահատվածում Ինստիտուտում կազմակերպվել է գիտական և մանկավարժական տարբեր հիմնախնդիրներին նվիրված 2 գիտաժողով:

Աշխատանք այլ երկրների բուհերի և կազմակերպությունների հետ: Ինստիտուտի ղեկավարությունը, հաշվի առնելով Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքները, մեծ ուշադրություն է դարձնում միջազգայնացման գործընթացներին՝ խթանելով մասնակցությունը կրթական, ուսումնական և գիտահետազոտական ծրագրերում:

Ինստիտուտը սերտորեն համագործակցում է Բաց հասարակության ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղի, Եվրամիության բարձրագույն կրթության Տեմպուս ծրագրի երևանյան գրասենյակի, Այոէքս կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի հետ: Ինստիտուտի աշխատակիցները 2012 թ.-ին մասնակցել են Այոէքս ծրագրի կողմից հայտարարված համալսարանների կառավարման ծրագրին, սակայն չեն ընտրվել:

Տեմպուս և Էրազմուս Մունդուս ծրագրերի 2012 թ. մեկնարկից հետո Ինստիտուտը մասնակցության հայտ է ներկայացրել 5 Տեմպուս և 3 Էրազմուս Մունդուս նախագծերին մասնակցելու համար:

Անցկացված մրցույթի արդյունքներով Ինստիտուտը ներգրավվել է մեկ Տեմպուս և երկու Էրազմուս Մունդուս ծրագրերում (Ianus նախագիծ, համակարգող՝ Ռումինիայի Յասի քաղաքի Ալեքսանդր Իոան Կրուզա համալսարան, և Eminence նախագիծ, համակարգող՝ Լեհաստանի Պոզնան քաղաքի Միցկևիչի անվան համալսարան)՝ որպես եվրոպական և հետխորհրդային մի շարք բուհերից կազմված կոնսորցիումի անդամ: Այդ կոնսորցիումների եվրոպական անդամներից են Գերմանիայի, Նիդերլանդների, Պորտուգալիայի, Իսպանիայի, Լեհաստանի, Ավստրիայի, Սլովակիայի, Ռումինիայի խոշորագույն բուհերը: Լայնորեն ներկայացված են հետխորհրդային երկրների՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ուկրաինայի, Մոլդովայի բուհերը:

Արդեն կայացել են նախագծերի մեկնարկային ժողովները, որոնց մասնակցել են Ինստիտուտի՝ տվյալ նախագծերի համակարգողները, ընտրվել են տարբեր հանձնաժողովներ, կազմվել և համակարգող բուհին են ուղարկվել մեկնարկային անհրաժեշտ փաստաթղթեր:

Ներկայումս կատարվում են աշխատանքներ՝ Ինստիտուտի կայքում վերոնշյալ ծրագրերին նվիրված էջ բացելու ուղղությամբ՝ այդ ծրագրերի մասին տեղեկատվություն տարածելու նպատակով:

Տեմպուս և Էրազմուս Մունդուս ծրագրերը հիանալի հնարավորություն են ընձեռում մեր ուսանողությանը և դասախոսական կազմին՝ սովորելու և աշխատելու արտասահմանյան լավագույն բուհերում, ինչպես նաև ընդունելու ուսանողներ և աշխատակիցներ արտասահմանյան բուհերից:

Ինստիտուտը 2010 թ.-ին համագործակցության եռակողմ պայմանագիր է ստորագրել Դարմշտադտի (Գերմանիա) կիրառական գիտությունների ավետարանչական համալսարանի և ՌԴ Կոստրոմայի Ն. Ա. Նեկրասովի անվան համալսարանի հետ:

Նշված արտասահմանյան բուհերի հետ Ինստիտուտն ունի նաև կնքված երկկողմանի պայմանագրեր:

Համագործակցության երկկողմանի պայմանագիր է կնքված նաև Գերմանիայի Օսնաբրյուկ քաղաքի հասարակական գիտությունների ավետարանչական համալսարանի հետ:

2012 թ. ընթացքում ամրապնդվել և խորացվել են Ինստիտուտի կապերը այդ բուհերի հետ:

Համաձայն Կոստրոմայի համալսարանի հետ ձեռք բերված համաձայնության՝ Ինստիտուտի կենսաբանական ֆակուլտետի երեք ուսանողներ 2012 թ. ամռանը իրենց դաշտային պրակտիկան տեղի համալսարանի ուսանողների հետ միասին անցկացրին Կոստրոմայի մարզի տարածքում գտնվող արգելոցում:

Հաշվետու տարում շարունակվել է մեր համագործակցությունը Ֆրանսիայի՝ ֆրանսերեն լեզվի թոշակառու ուսուցիչների «Գրեֆ» կազմակերպության հետ, որի հետ Ինստիտուտն ունի համագործակցության պայմանագիր: 2012 թ. գարնանը այդ կազմակերպության ներկայացուցիչներն Ինստիտուտում անցկացրել են վերապատրաստման դասընթացներ Վանաձորի և Լոռու մարզի ֆրանսերեն լեզվի մասնագետների համար: Դասընթացներին, որոնք անցկացվում էին մեր Ինստիտուտում, մասնակցել են նաև բարձր կուրսերի լավագույն ուսանողներ:

Բուհ-դպրոց կապերի բնագավառի աշխատանքներ:

Հանրապետությունում իրականացվող կրթական բարեփոխումները փոխադարձաբար ընկալելի դարձնելու, այդ ուղղությամբ համատեղ գործունեություն ծավալելու նպատակով Ինստիտուտի ռեկտորի հրամանով 2010 թ.-ից գործում է բուհ-դպրոց կապերի ենթաբաժինը:

Հաշվետու ժամանակահատվածում ենթաբաժինը, համաձայն աշխատանքային պլանի, իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. 2012 թ. գարնանն անցկացվեց ասմունքի մրցույթ՝ նվիրված գարնանը և Մայրության ու գեղեցկության տոնին (մասնակիցների թիվը՝ 85 աշակերտ):

2. 2012 թ. ընթացքում հետաքրքիր օլիմպիադաներ, վիկտորինաներ են անցկացրել ռուսաց լեզվի, պատմության, օտար լեզուների ամբիոնները: Այդ միջոցառումներին մասնակցել են վարժարանի և Վանաձոր քաղաքի մի շարք դպրոցների բարձր դասարանների աշակերտներ:

3. 2012 թ. գարնանն Ինստիտուտում բուհի ընդունելության քննական բոլոր առարկաներից անցկացվեց ամենամյա

առարկայական օլիմպիադա, որին մասնակցեցին թվով 580 բարձր դասարանցիներ /330-ով ավելի, քան նախորդ՝ 2011 թ./:

4. Ինստիտուտը մեծ նշանակություն է տալիս դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներին: Մասնագիտական կողմնորոշմանը մեծապես նպաստում են նաև Ինստիտուտում կազմակերպվող անվճար նախապատրաստական դասընթացները, որոնք անցկացվում են բոլոր քննական առարկաներից: Տվյալ դասընթացների նպատակն էր՝ օգնել անապահով ընտանիքների երեխաներին ընդունվելու ինստիտուտ և սովորելու իրենց նախընտրած մասնագիտություններով:

Ինստիտուտի կողմից նման նախապատրաստական դասընթացներ են անցկացվել նաև Ալավերդի և Սպիտակ քաղաքներում, որոնք վարում էին տեղի փորձառու մասնագետներ: Արդյունքում՝ այդ պարապմունքներին հաճախած և Ինստիտուտ դիմած աշակերտների մոտ 50%-ը հաջողությամբ հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել Ինստիտուտի առկա և հեռական ուսուցման տարբեր բաժիններ:

2012 թ. նոյեմբերից, արձագանքելով ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հանձնարարությանը, Ինստիտուտում կազմակերպվել են նախապատրաստական դասընթացներ Վանաձոր քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների 16-18 տարեկան դպրոցականների համար: Այդ դասընթացներում ընդգրկվել են Վանաձորի սոցիալական ծառայության բաժնում գրանցված նպաստառու ընտանիքներից 11-12-րդ դասարաններում սովորող թվով 110 երեխաներ, որոնք ցանկություն են հայտնել սովորելու հանրապետության տարբեր բուհերում:

Դպրոցականների ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու նպատակով կատարվել են այցելություններ մարզի քաղաքների և մի շարք գյուղական համայնքների դպրոցներ՝ անցկացնելով թվով 32 հանդիպումներ բարձր դասարանների աշակերտների և նրանց ծնողների հետ:

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ինստիտուտի լրատվության և տպագրության բաժինն աշխատանքներ է իրականացնում հետևյալ ուղղություններով՝

- ➔ «Ապագա մանկավարժ» երկշաբաթաթերթի հրատարակում.
- ➔ գիտական նյութերի ժողովածուների ձևավորում, հրատարակության պատրաստում, ուսումնական ձեռնարկների տպագրություն.
- ➔ ներինստիտուտային իրադարձությունների լուսաբանում, իրազեկում ՁԼՄ-ներով, «Բանբեր ՎՊՄԻ» հաղորդաշարի, տեսաֆիլմերի, գովազդների, հայտարարությունների, Ինստիտուտի համացանցային կայքի «Նորություններ», «Պատկերասրահ», «Նոր գրքեր» բաժինների պատրաստում.
- ➔ տեսա-ֆոտոարխիվավորում.
- ➔ տպագրական աշխատանքներ (հրավիրատոմսեր, ծրագրեր, տեղեկատվական թերթիկներ, ուսումնաօժանդակ աշխատանքների համար անհրաժեշտ ձևաթղթեր և այլն).
- ➔ պատճենահանման և կազմման աշխատանքներ:

2012 թ. ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր են կնքվել Լոռու մարզի 4 հեռուստաընկերությունների, ինչպես նաև տպագիր երկու լրատվամիջոցի հետ, որոնք պայմանագրերի շրջանակներում հեռարձակել և/կամ տպագրել են հայտարարություններ: 2012 թ. ՁԼՄ-ներին տրվել է թվով 33 հայտարարություն:

Աղյուսակ 6. Ինստիտուտի ներկայացվածությունը ՁԼՄ-ներում.

h/h	Մարզային և տեղական ՁԼՄ-ներ	Ունեւորտուժ և այլ	դրամատարություն
1.	«Լոռի թի-վի» ՀՌԸ	23	8
2.	«Լոռու ՄԻԳ» ՀՌԸ	17	4
3.	«Գ-րդ ալիք» ՀԸ	14	3
4.	«Ֆորտունա» ՀԸ	14	2

5.	«Լոռու մարզ»	36	14
6.	«Վանաձորյան խճանկար»	2	2
Ընդամենը		106	33
Հանրապետական ՋԼՄ-ներ			
1.	«Առավոտ»	7	
2.	«Հետք»	8	
3.	«Կրթություն»	1	
4.	Այլ	7	
Ընդամենը		23	
ՎՊՄԻ-ի մամուլ			
1.	«Բանբեր ՎՊՄԻ»	14	
2.	«Ապագա մանկավարժ»	10	
Ընդամենը		23	
Բուհի կայք			
1.	www.vspi.am	84	
Ընդամենը		84	
Ընդամենը		269	

Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել է «Բանբեր ՎՊՄԻ» հաղորդաշարի 14 թողարկում, լույս է տեսել «Ապագա մանկավարժ» երկշաբաթաթերթի 10 համար, տպագրության է պատրաստվել գիտական նյութերի 5 ժողովածու, ուսումնամեթոդական 4 ձեռնարկ: Ձևավորվել և տպագրվել են Ինստիտուտի բոլոր միջոցառումների հրավիրատուները, ծրագրերը: Կատարվել նաև ուսումնասօժանողակ պարապմունքներին անհրաժեշտ տպագրական, պատճենահանման, կազմարարական այլ աշխատանքները:

Ինստիտուտի տեղեկատվական գործունեությունն անհնար է պատկերացնել առանց համացանցի: Ինստիտուտի կայքի (vspi.am) բովանդակությունը պարբերաբար թարմացվում է, իսկ 2012-13 ուստարվանից սկսած՝ գործում է առավել ակտիվորեն՝ համարյա յուրաքանչյուր օր հրապարակելով նյութեր ներբուհական կյանքի իրադարձությունների մասին (միայն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հրապարակվել է տեղեկատվական բնույթի շուրջ 30

նյութ): Ավելացվել են «Նոր գրքեր» «Ծրագրեր» «Աշխատատեղեր» բաժինները:

Լուսաբանվել է նաև հավատարմագրման գործընթացը «Լոռի» հեռուստաալիքով և Ինստիտուտի «Բանբեր ՎՊՄԻ» հեռուստահաղորդաշարում:

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ազգային անկախ պետականության ձեռքբերումների և նվաճումների պահպանման, ամրապնդման և քարոզչության համար ներկայումս էապես կարևորվում են երիտասարդության, հատկապես ուսանողների հետ իրականացվող հայրենասիրական դաստիարակությանը և մարզառազմական պատրաստվածությանը միտված աշխատանքները:

Հաշվետու տարում շարունակել են գործել նախորդ 4 տարիներին ձևավորված ուսանողական մարզական խմբակները (Ֆուտբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, բասկետբոլ, շախմատ)՝ հանդես գալով ներինստիտուտային և ինստիտուտից դուրս կազմակերպվող բազմաթիվ մարզական միջոցառումներում:

2012-ին ՎՊՄԻ մարզառազմահայրենասիրական դաստիարակության կենտրոնի գործունեության պլանին համապատասխան կազմակերպվել և անցկացվել են ներինստիտուտային, քաղաքային, մարզային ու հանրապետական ուսանողական միջբուհական, մարզառազմական առաջնություններ և հայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներ: Դրանցից են.

- Մայիսյան հաղթանակներին նվիրված միջոցառումները,
- Գնդակային հրաձգության ներինստիտուտային ամենամյա մրցումները՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին և Շուշիի ազատագրման 20-ամյակին (ապրիլի 25-ից մայիսի 7-ը՝ աշխատակիցներ - 115 մասնակից, սեպտեմբերի 18-28-ը՝ ուսանողներ - 72 մասնակից):
- Հայաստանի անկախությանը նվիրված հանդիպում-միջոցառում գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանի՝ լեգենդար Կոմանդոսի, պատերազմի վետերանների,

արցախյան պատերազմի ազատամարտիկների և Լեռնային ուսումնական կենտրոնի հատուկ ջոկատայինների մասնակցությամբ,

- Ինստիտուտի միջֆակուլտետային առաջնություններ տարբեր մարզաձևերից (մինի ֆուտբոլ, գնդակային հրաձգություն, շախմատ, սեղանի թենիս)՝ ուսանողների և դասախոս-աշխատակիցների մասնակցությամբ,
- «Ինչի՞ց է սկսվում հայրենիքը» թեմայով կլոր սեղան-հարցազրույց ուսանողների և դասախոսների մասնակցությամբ՝ նվիրված ՀՀ Անկախության տոնին,
- Սեմինար՝ «Պետական խորհրդանիշներ (ՀՀ զինանշան, ՀՀ դրոշ, ՀՀ օրհներգ)» թեմայով՝ պետական օրհներգի պարտադիր իմացությամբ:
- Ուսանողական միջոցառումներ նվիրված Մայրենի լեզվին, կոմպոզիտոր Ֆ. Լիստին, «Բարեկենդան», «Ճանաչենք մեր արվեստագետներին», «Ստեղծագործում են ՎՊՄԻ աշխատակիցները և ուսանողները», «Вечна, женщина, любовь», ներկայացում «Հրեշտակի թևերով», արշավ Մայմեխի ստորոտ, դրամահավաք «Ծերերի միջազգային օր» և այլն:

Մշակույթի կենտրոնին կից շարունակում են գործել ազգագրական և ժամանակակից պարերի, երգի խմբակներ, ինչպես նաև վոկալ-գործիքային համույթ, գրական և թատերական խմբակները:

2012 թ. որոշակի ձեռքբերումներ են գրանցվել Ինստիտուտի մարզական կյանքում: Անցկացվել են Ինստիտուտի զարնանային սպարտակիադա, ինչպես նաև սպորտային մրցումներ առանձին մարզաձևերից: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել են մինի ֆուտբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, կրոսավազքի, գնդակային հրաձգության, շախմատի, աթլետիկայի միջֆակուլտետային մրցումներ և անհատական առաջնություններ:

Ինստիտուտի աշխատակիցները և ուսանողներն ակտիվորեն մասնակցել են ավանդական «Լոռվա ձմեռ» մարզատոնահանդեսին, ՀՀ Անկախության օրվան նվիրված ամենամյա արշավին՝ Մայմեխ լեռան ստորոտ, ինչպես նաև այնտեղ կազմակերպված մարզական ու մշակութային միջոցառումներին:

Ինստիտուտի ուսանողական մարզական թիմերը ակտիվ մասնակցություն են ունեցել նաև քաղաքային, մարզային և հանրապետական տարբեր մարզական միջոցառումների ու մրցումների՝ հիմնականում գրավելով մրցանակային տեղեր.

- ➔ Ինստիտուտի հավաքական թիմը մասնակցել է միջմարզային ֆուտզալի «Մարզպետի գավաթ» մրցաշարին, գրավել 3-րդ տեղը:
- ➔ Ինստիտուտի բասկետբոլի հավաքական թիմը Վանաձոր քաղաքի առաջնությունում գրավել է 1-ին տեղը:
- ➔ ՀՀ ուսանողական 13-րդ մարզական խաղերին կրոսավազքի՝ տղաների և աղջիկների թիմերը գրավել են 2-րդ տեղերը, վոլեյբոլի հավաքականը՝ 4-րդ տեղը:
- ➔ ՀՀ մայիսյան տոներին նվիրված Վանաձորի ՊՍՏՀԿ խորհրդի փոխանցիկ գավաթի մրցումներին Ինստիտուտի գնդակային հրաձգության թիմը գրավել է 2-րդ տեղը:

2012 թ. քաղաքաշտպանության պլանը համաձայնեցվել է ն՝ ՀՀ ԱԲՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության, ն՝ Վանաձոր համայնքի քաղաքաշտպանության հետ:

Ինստիտուտի քաղաքաշտպանության շտաբում ստեղծվել են համապատասխան խմբեր՝ փրկարարական, կապի, հասարակական կարգի պահպանության, թաքստոցների սպասարկման և նյութատեխնիկական մատակարարման, որոնց հետ անցկացվել են պլանային վարժանքներ:

Մարտի 1-ին Քաղաքաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ անցկացվեցին օբյեկտային վարժանքներ «Տարհանման միջոցառումների իրականացումը» թեմայով:

Սեպտեմբերի 21-ին՝ նվիրված ՀՀ Անկախության օրվան, Ինստիտուտի քաղաքաշտպանության շտաբի հրավերով կազմակերպվեց հանդիպում ՀՀ ԱԲՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի, Լեռնային ուսումնական կենտրոնի հատուկ ջոկատայինների հետ, որոնք հանդես եկան հատուկ իրավիճակային դեպքերում իրականացվող ցուցադրական ելույթներով:

Վանաձորում տեղակայված զորամասում Ինստիտուտի ուսանողների հետ անցկացվել են ուսումնական պարապմունքներ,

որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են ժամանակակից գենքերից պաշտպանվելու և քիմիական պաշտպանության հատուկ միջոցներին, տիրապետել նրանցից օգտվելու ձևերին:

Նախատեսվում է նույն զորամասի հրաձգարանում հրաձգության վարժություններ անցկացնել ինստիտուտի ուսանողների և դասախոսական կազմի հետ:

Ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի կազմում ստեղծված հոգեբանական խորհրդատվական կենտրոնը հոգեբանական խորհրդատվական ծառայություն, գիտաուսումնական և ուսումնամեթոդական գործունեություն իրականացնող ստորաբաժանում է: Կենտրոնը ինստիտուտի ուսանողներին և աշխատակիցներին անվճար հիմունքներով մատուցում է տարաբնույթ ծառայություններ՝ կապված հոգեբանական խորհրդատվական խնդիրների լուծման, հոգեբանական օգնության կազմակերպման գործընթացների հետ:

Կենտրոնի աշխատանքները կարգավորվում են Ինստիտուտի Գիտխորհրդի նիստում հաստատված կանոնակարգով:

2012 թ. հոգեբանական խորհրդատվական կենտրոնը բուհի աշխատակիցներին և սովորողներին մատուցել է անվճար հոգեբանական խորհրդատվություն տարաբնույթ հիմնախնդիրների շուրջ՝ կապված ինչպես անձնական, այնպես էլ մասնագիտական հոգեբանամանկավարժական հիմնախնդիրների հետ:

Կենտրոնում մշակման փուլում է Լոռու մարզի դպրոցների հոգեբանների որակավորման բարձրացման ծրագիրը, որով նպատակ է հետապնդվում բարձրացնելու մեր մարզում և համայնքում գործող դպրոցների հոգեբանական ծառայությունների մատուցման որակը: Մշակվում են նաև դրամաշնորհային ծրագրեր՝ կապված մանկավարժական կադրերի բարոյահոգեբանական մտահասության զարգացման և ուսանողների, հատկապես առաջին կուրսեցիների հոգեբանական հարմարման հետ: Դրամաշնորհային ծրագրերը կներկայացվեն միջազգային դոնոր կազմակերպություններին:

Առաջիկա տարում Ինստիտուտի քաղաքականության բուն շեշտադրումը պետք է ուղղված լինի մինչև այժմ նախաձեռնած

գործերը ավարտին հասցնելուն՝ կարևորելով դրանց բովանդակային պլանի կատարելությունը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ 2013 թվականի անելիքների ցանկում ավելի շատ տեղ են գտել անցած տարիների ընթացքում կատարված, սակայն դեռևս անավարտ կամ մեր կողմից սպասված արդյունք չունեցող ձեռնարկումները՝ հազվադեպ տեղ տալով տակավին նոր անելիքների:

Ստորև ներկայացվում են 2013 թ. հիմնական անելիքները:

Կրթական գործընթաց

1. Մագիստրոսական կրթական ծրագրերի մեթոդական հենքի վերանայում և համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին:
2. «Ինֆորմատիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ստեղծում և ներդրում:
3. Օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ տարվող համալիր աշխատանք

Ուսումնառություն և դասավանդման որակների

արդյունավետության բարձրացում

1. Ուսուցման նորարարական մոտեցումների մշակում և կիրառում:
2. Ինքնուրույն աշխատանքի բովանդակային կողմի հստակեցում, դասախոսների կողմից վերահսկման և ղեկավարման գործիքների մշակում:
3. Ուսուցման գործընթացում ուսանողների բավարարվածության հաշվառում, բավարարվածության աստիճանի զարգացում:
4. Տեխնոլոգիապետ հագեցած լսարանային ցանցի ընդլայնում:
5. Ուսանողների առաջադիմության վերաբերյալ տվյալների տեղադրում Ինստիտուտի կայքէջում:

Որակի կառավարման և բարձրացման կատարելագործում

1. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման համալիր համակարգի ներդրում:
2. Կրթական գործընթացն ապահովող նյութատեխնիկական բազայի հարստացում և վերազինում արդի տեխնոլոգիական պահանջներին համահունչ:
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով դասավանդող անձնակազմի պարբերական ուսուցման կազմակերպում:
4. Կրթության որակի կառավարման համակարգի կատարելագործում:
5. Կրթության կազմակերպման և որակի ներքին աուդիտի աշխատանքների ամփոփում, վերլուծություն, մեթոդական երաշխավորությունների ներկայացում:
6. Կրթության որակի վարկանիշային վերահսկման համակարգի կատարելագործում (ուսանողի գիտելիքի, դասախոսի, ամբիոնի, ֆակուլտետի):
7. Որակի գնահատման չափանիշների գործընթացների թափանցիկության, հրապարակայնության և իրազեկման ապահովում:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆեսոր Գ. Կ. Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին (փետրվար):
2. «Անցումային հասարակություն. հիմնախնդիրներ, բարեփոխումներ» խորագրով հանրապետական գիտաժողով (ապրիլ):
3. Միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի նիստ (ապրիլ):
4. Հանրապետական գիտաժողով՝ «Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և կանխման հնարավոր ուղիները» խորագրով (մայիս):
5. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված հայոց և համաշխարհային պատմության հիմնախնդիրներին (նոյեմբեր):

6. Հանրապետական գիտաժողով՝ «Բուհական կրթության հոգեբանական հիմնախնդիրները» խորագրով (մայիս):
7. Հանրապետական գիտաժողով՝ «Կրթական և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում» խորագրով (հոկտեմբեր):
8. Հանրապետական գիտաժողով՝ «Բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրները» խորագրով (հունիս):
9. Ուսանողական գիտաժողով՝ «Կենսաբազմաձևության պահպանման խնդիրներ» խորագրով (հոկտեմբեր):

Ուսանողական գիտահետազոտական աշխատանքների ակտիվացում

1. Ուսանողական գիտաժողովներ հումանիտար, մանկավարժական, սոցիալ-տնտեսական գիտաճյուղերով (առաջին կիսամյակ), ֆիզմաթ և բնագիտական գիտաճյուղերով (երկրորդ կիսամյակ):
2. Գիտաժողով մագիստրոսական կրթական ծրագրում սովորողների համար (հումանիտար, ապրիլ):
3. Առարկայական օլիմպիադաներ հումանիտար առարկաներից (երկրորդ կիսամյակ), ֆիզիկա, մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա առարկաներից (առաջին կիսամյակ):
4. Կերպարվեստի միջբուհական ուսանողական ցուցահանդես:

Բուհ-դպրոց կապեր

1. Հայկական պոեզիայի ասմունքի մրցույթ (ավանդական):
2. Ռուսական պոեզիայի ասմունքի մրցույթ:
3. Վիկտորինաներ, բրեյն-ժինգ ՀԺՊ-ից, կենսաբանությունից, քիմիայից:
4. Դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպում:
5. Բաց դասերի անցկացում դպրոցներում:
6. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ ավագ դպրոցում:

7. Դպրոցականների համար լաբորատոր-ցուցադրական աշխատանքների կազմակերպում (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն):
8. Մասնագիտական սեմինարների կազմակերպում ուսուցիչների համար:
9. Նախապատրաստական դասընթացների կազմակերպում:

Սոցիալ-մշակութային գործունեություն

1. Մշակույթի, մարզաժամական և հայրենասիրական դաստիարակության, հոգեբանական խորհրդատվությունների կենտրոնների գործունեության խթանում:
2. «Երգում ենք հայրենասիրական երգեր» փառատոն-մրցույթ:

Շինարարական աշխատանքներ

1. Վարժարանի մասնաշենքի տանիքի ծածկի ձևափոխում:
2. Ինստիտուտի գլխավոր մասնաշենքի սանհանգույցների նորոգում:
3. Ինստիտուտի մասնաշենքերի հին պատուհանների փոխարինումը նորերով:
4. Գրադարանի հատակի նորոգում:
5. Ինստիտուտի գլխավոր մասնաշենքի մանրահատակների հղկում, լաքապատում, մուտքի փայտյա դռների հիմնանորոգում:
6. Ինստիտուտի ուսումնամարզական հանգրվանի մարզադաշտերի և լողավազանի շինարարություն:
7. Մասնաշենքերի մասնակի նորոգում:
8. Բազումի 2-րդ մասնաշենքի գույքի ձեռք բերում:

Հասարակության հետ կապերի ձևավորում,**հետադարձ կապի կայուն մեխանիզմների մշակում**

1. Հետադարձ կապերի ընդլայնում և խորացում գործատուների, մարզում և հանրապետության այլ շրջաններում աշխատող նախկին շրջանավարտների հետ:
2. Բուհի կայքէջի վերակառուցում:
3. Ուսանողների առաջադիմության վերաբերյալ տվյալների տեղադրում Ինստիտուտի կայքէջում:
4. Բուհի գործունեության վերաբերյալ հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրություն:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 3.8 տպագր. մանուկ
Տպաքանակը՝ 60 օրինակ

Տպագրվել է «Սիմ տպագրատուն» ՍՊԸ տպարանում: